

ԻՊԱՍ զեկույց . Պետական եկամուտների
կոմիտեի դեմ դատական գործերի
ուսումնասիրություն



Երևան, 2021թ.



Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Դատական բարեփոխումների խթանում. Հանրային կառավարման որակի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) ֆինանսավորմամբ, թիվ 2020-0183 դրամաշնորհի շրջանակներում:

Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են ուսումնասիրության և զեկույցի հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամ կազմակերպության տեսակետների հետ:

Սույն զեկույցի հեղինակներն են՝ Լուիզա Հովհաննիսյանը, Նինա Հակոբյանը, Աննա Մելիքյանը, Արաքս Մելքոնյանը:

Դատական ակտերի ուսումնասիրության և տեղեկատվության հավաքագրմանը աջակցել են՝ Կարինա Ավանեսյանը, Վանատուր Շերենցը, Լուիզա Հովհաննիսյանը, Էվելինա Հակոբյանը, Արմինե Հակոբյանը, Լիլիթ Գալստյանը և Քրիստինա Ղուկասյանը:

Բովանդակություն

Բովանդակություն.....	3
Հապավումների ցանկ.....	4
ԱՄՓՈՓԱԳԻՐ.....	5
1. Դիտարկված գործերի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ.....	7
2. Վարչարարության իրականացման հետ կապված խնդիրներ.....	14
3. Կարճման որոշումներ.....	47
4. Եզրակացություն և առաջարկություններ.....	51

Հապավումների ցանկ

Ավելացված արժեքի հարկ`	ԱԱՀ
Հայաստանի Հանրապետություն`	ՀՀ
Հսկիչ դրամարկղային մեքենա	ՀԴՄ
Պետական եկամուտների կոմիտե`	ՊԵԿ
Սահմանադրական դատարան`	ՍԴ
Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք`	ՎԻՎ օրենսգիրք

ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը 2020թ. մարտի 1-ից 2021թ. մարտի 31-ը ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացրել է «Հանրային կառավարման համակարգի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի դեմ բերված հայցերով 2019թ. և 2020թ. Հայաստանի Հանրապետության վարչական դատարան մուտքագրված և մինչև 2020թ. հունիսի 30-ը կայացված 333 վճիռներից 223-ը:

Դիտարկված գործերից 137-ով հայցերն ամբողջությամբ բավարարվել են (62%), 38-ով՝ մերժվել (31%), 14-ով՝ բավարարվել է մասնակի (6%), իսկ 1-ով՝ հայցվորները երկուսն էին, վճիռը հայցվորներից մեկի մասով բավարարվել է ամբողջությամբ, մյուսի մասով՝ մերժվել է, իսկ 68-ով (39%)՝ հայցերը մերժվել են: Ստացվում է, որ գործերի գերակշիռ մասով ավելի շատ արձանագրվել են վարչարարության հետ կապված խնդիրներ, քան բացառվել են դրանց առկայությունը:

Բավարարված գործերից մեծ մասով (47 հատ՝ 21%) հայցերը ներկայացված են եղել հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու, հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու (65 հատ՝ 29 %) հիմքերով: Ստացվում է, որ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու հիմքով վարչական տույժ նշանակելու մասին որոշումներով, ինչպես նաև չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ վարչական ակտերով վարչական մարմինը չի իրականացնում պատշաճ վարչարարություն, որը հանգեցնում է սեփականության իրավունքի և անձանց լաված լինելու իրավունքի խախտմանը: Երկու դեպքում էլ Վարչական դատարանի կողմից արձանագրված վարչարարության խնդիրները միանման են եղել, մասնավորապես հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու հիմքով հարուցված վարչական վարույթն իրականացնելիս հարկային տեսուչները թույլ են տվել լիազորությունների վերազանցում՝ լիազորված չլինելով իրականացնել հսկիչ գնում, սակայն, ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, նման պահանջներով հայցերը բավարարվելուց հետո, դիտարկման ողջ ժամանակահատվածում, վարչական մարմինը ստուգման համար հիմք հանդիսացող հանձնարարագրերում նշել է այն նույն իրավական հիմքը, որով դատարանը մատնանշում է, որ հիմք չէ հսկիչ գնում իրականացնելու համար:

Չի փոփոխվել նաև էլեկտրոնային եղանակով ծանուցման պրակտիկան, թեև Վարչական դատարանը բազմիցս նշել է, որ կիրառված մեթոդով ծանուցումը չի կարող համարվել պատշաճ ծանուցում: Հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ վարչական ակտերով վարչական մարմինը բավարարված հայցերից հետո ևս ծանուցումներն իրականացնում է էլեկտրոնային եղանակով և ոչ պատշաճ ծանուցման արդյունքում ուշացված հարկային պարտավորությունները այդպես էլ չեն գանձվում:

Պետական եկամուտների կոմիտեի ոչ պատշաճ վարչարարության արդյունքում չեն գանձվում գործող օրենսդրությամբ սահմանված հարկերը, ինչի հետևանքով պետությանը պատճառվում է նյութական վնաս, որն արտահայտվում է նաև դատական ծախսերի տեսքով, քանի որ թե՛ պետական տուրքերը, թե՛ ներկայացուցչի վճարներն ու այլ դատական ծախսերը վճարվում են պետական բյուջեից:

Ընդհանուր առմամբ, դիտարկված գործերով Պետական եկամուտների կոմիտեն ստիպված է եղել վճարել հայցվորներին 2.175.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ բոլոր գործերով է երևում Հայցվորին առաջադրված հարկային պարտավորության չափը, ուստի հնարավոր չէ հստակ նշել, թե ընթացակարգային խախտումներով անվավեր ճանաչված վարչական ակտերի արդյունքում որքան հարկային պարտավորություն պետք է մուտք լիներ պետական բյուջե, ինչը չի կատարվել:

Մինչ դիտարկման արդյունքների վերջնականացումը հանդիպում է տեղի ունեցել նաև Պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչների հետ: 2021թ. մարտի 31-ին ԲՊԱՍ և ՊԵԿ ներկայացուցիչների միջև տեղի ունեցած հանդիպմանը քննարկվել են դուրս բերված խնդիրները և դրանց լուծման շուրջ ՊԵԿ-ի առաջարկները: Կոմիտեի դիրքորոշումը կոնկրետ հարցերի շուրջ ևս ներկայացված է զեկույցում:


1. Դիտարկված գործերի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը 2020թ. մարտի 1-ից 2021թ. մարտի 31-ը ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացրել է «Հանրային կառավարման համակարգի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ կամ Կոմիտե) դեմ բերված հայցերով 2019թ. և 2020թ. ՀՀ վարչական դատարան (այսուհետ՝ Դատարան) մուտքագրված և մինչև 2020թ. հունիսի 30-ը կայացված 333 վճիռներից 223-ը:

Դիտարկված գործերից՝

- 65-ը վերաբերել են հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելուն,
- 47-ը՝ հսկիչ դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություններ չտրամադրելուն,
- 15-ը՝ շահութահարկի հաշվարկների սխալներին,
- 12-ը՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելուն,
- 11-ը՝ ապրանքների սխալ հայտարարագրմանը,
- 7-ը՝ հարկերը, տուրքերը և օրենքով սահմանված պարտադիր այլ վճարումները ժամանակին չվճարելուն,
- 7-ը՝ հաշվապահական հաշվառումը սահմանված կարգով չվարելուն կամ հաշվապահական հաշվառման տվյալները ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց չներկայացնելուն,
- 5-ը՝ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելուն և (կամ) սահմանված ժամկետում աշխատողի համար գրանցման հայտ չներկայացնելուն
- 5-ը՝ դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելուն, դրամարկղային գրքի վարման կանոնները խախտելուն
- 4-ը՝ հարկային հաշվարկը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելը կամ չներկայացնելուն,
- 3-ը՝ աշխատողին աշխատանքից ազատելու հրամանն անվավեր ճանաչելուն,
- 3-ը՝ ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելուն,
- 3-ը՝ ապրանքների սխալ հայտարարագրմանը,
- 2-ը՝ դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելը, դրամարկղային գրքի վարման կանոնները խախտելուն,
- 1-ը՝ հարկի գումարը պակաս ցույց տալուն,
- 1-ը՝ հարկային վնասն ավել ցույց տալուն,
- 1-ը՝ ապրանքների մնացորդի հաշվառման կարգը խախտելուն:

Դիտարկված գործերից 201-ով հայցը քննվել է վիճարկման հայցատեսակի, 8-ով՝ ճանաչման, 8-ով՝ պարտավորեցման, 5-ով՝ գործողության կատարման հայցատեսակի շրջանակներում:



Դիտարկված գործերից 201-ով (90,5%-ը) վիճարկվել են հարկային պարտավորությունները գանձելու, վարչական տույժ նշանակելու, ստուգման ակտն անվավեր ճանաչելու մասին որոշումները:

Դիտարկված գործերն առնչվել են մարդու իրավունքների հետևյալ խնդիրներին՝ պատշաճ վարչարարության իրականացում, սեփականության իրավունք, լաված լինելու իրավունք, իրավական որոշակիության սկզբունք, կամայականության արգելք: Պատշաճ վարչարարություն ապահովված չլինելու խնդիրը բարձրացված է եղել գործերի 100 %-ի դեպքում, սեփականության իրավունքի՝ 97 %-ի դեպքում, լաված լինելու իրավունքի՝ 35%-ի դեպքում՝ հատկապես չվճարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ վարչական ակտերի վիճարկմանը վերաբերող գործերով:

Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու վերաբերյալ դիտարկված 65 գործերից Դատարանի կողմից բավարարվել են 34 հայցը, հսկիչ դրամարկղային մեքենայով (այսուհետ՝ ՀԴՄ) իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություններ չտրամադրելու վերաբերյալ 47 գործերից բավարարվել են 42-ը, աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելը և (կամ) սահմանված ժամկետում աշխատողի համար գրանցման հայտ չներկայացնելու վերաբերյալ բոլոր 5 հայցերը բավարարվել են: Կարելի է եզրահանգել, որ ոչ պատշաճ վարչարարությունը արձանագրվել է ոչ թե կախված խնդրի բնույթով, այլ տվյալ խնդրով ներկայացված հայցերի քանակով, այսինքն՝ որքան շատ են տվյալ խնդրով ներկայացվել հայցերը, այնքան ավելի շատ են դրանցում բավարարված գործերի քանակը:




Դիտարկված գործերից 121-ով (54%-ը) հայցվորը եղել է առևտրային կազմակերպություն, 45-ով (20%-ը)՝ ֆիզիկական անձ, իսկ 47 գործով (21%-ը)՝ անհատ ձեռնարկատեր:

Ընդ որում, ֆիզիկական անձինք հանդես են եկել գրեթե բոլոր այն գործերում, որտեղ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով (այսուհետ՝ ՎԻՎ օրենսգիրք) իրավախախտման համար վարչական պատասխանատվության է ենթարկվել առևտրային կազմակերպության տնօրենը:

Ֆիզիկական անձ հանդիսացող հայցվորները 45 գործից 6-ով ներկայացուցիչ չեն ունեցել, 11 գործով ներկայացված է եղել այլ տեսակի ներկայացուցչի կողմից, 28 գործով ներկայացված են եղել փաստաբանի կողմից, այդ թվում՝ 10 դեպքում ներկայացուցչի անունն առկա է փաստաբանների ցանկում, սակայն փաստաբան լինելու մասին որևէ նշում առկա չէ վճռում: Անհատ ձեռնարկատեր հանդիսացող 47 հայցվորներից 23-ը ներկայացված են եղել փաստաբան ներկայացուցչի կողմից, որից 7-ի անունն առկա է ՀՀ գործող փաստաբանների ցանկում, սակայն նրանց՝ փաստաբան լինելու մասին նշում առկա չէ վճռում: ՊԵԿ-ի դեմ մշտադիտարկված գործերից շատերում որպես ներկայացուցիչ հանդես է եկել նույն անձը, որի անունը ևս առկա չէ փաստաբանների պալատի կայքում: Իսկ դիտարկված գործերից միայն 2-ով է հայցվորի ներկայացուցիչը հանդիսացել հանրային պաշտպան¹:

Հայցվորն անձամբ կամ ներկայացուցչի միջոցով գործի քննությանը մասնակցել է դիտարկված գործերից 149-ով (դիտարկված գործերի 67%-ը), իսկ գործերից 9-ով (4 %) պարզ չէ՝ արդյո՞ք Հայցվորն անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել է դատաքննությանը, քանի որ առկա չէ համապատասխան մատնանշում:

Միևնույն ժամանակ Պատասխանողը գործերի մեծամասնության դեպքում՝ 153 գործով (69%) ապահովել է ներկայությունը գործի քննության ժամանակ:



Դիտարկված գործերից միայն 119-ով (53%-ը) և՛ Հայցվորը, և՛ Պատասխանողը ապահովել են ներկայությունը դատական նիստերին:

Հատկանշական է, որ դիտարկված գործերից 206-ով (93%-ը) է ներկայացվել հայցադիմումի պատասխան կամ այլ տեսակի առարկություն, մասնավորապես՝ 105 գործով ներկայացվել է

¹ Տե՛ս, ՎԴ/1526/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931456; ՎԴ2/0134/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934211

գրավոր առարկություն, 76-ով՝ հայցադիմումի պատասխան, իսկ 63 գործով Պատասխանողը դատական նիստի ընթացքում ներկայացրել է բանավոր առարկություններ:

Ընդ որում, միննույն հիմքերով հարուցված վարչական վարույթների գործերով Պատասխանողի կողմից ներկայացված առարկությունները նույնաբովանդակ են եղել:

Դատավորների փոփոխություն տեղի է ունեցել միայն 5 գործով՝ հայցը վերադարձնելուց հետո գործը քննող դատավորի ամենամյա արձակուրդում գտնվելու և այլ դատավորի կողմից վարույթ ընդունելու արդյունքում:

Դիտարկված գործերից 28-ի դեպքում հայցը վերադարձվել է, որոշ դեպքում՝ մի քանի հիմքով, ընդ որում, 2 գործով այն վերադարձվել է երկու անգամ²: Հայցադիմումները վերադարձվել են հետևյալ հիմնավորումներով.

- 11 գործով կցված չեն եղել պետական տուրքը վճարելու մասին անդորրագիրը, իսկ 5 գործով՝ վիճարկվող վարչական ակտը կամ դրա պատճենը,
- 2 գործով ներկայացված չի եղել պետական տուրքի վճարումից ազատելու կամ այն հետաձգելու միջնորդություն,
- 1 գործով հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները չեն ուղարկվել Պատասխանողին կամ երրորդ անձանց,
- 1 գործով ներկայացված չի եղել բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդություն,
- 1 գործով նշված չեն եղել Հայցվորի անձնագրի տվյալները,
- 1 գործով որպես ընկերության տնօրեն ներկայացված անձը չի ստորագրել հայցադիմումը:

Դիտարկված գործերից 15-ով Հայցվորը ներկայացրել է բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի ճանաչելու միջնորդություն, որից 6-ը բավարարվել է, 4-ը թողնվել է առանց քննության, 3-ը՝ թողնվել է դատական նիստում քննության, իսկ 2-ը՝ մերժվել³: Ընդ որում, գործերից մեկով⁴ Հայցվորը միջնորդության հիմքում դրել է այն հանգամանքը, որ վիճարկվող որոշման մասին տեղեկացել է հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքից (azdarar.am), ապա վարչական վարույթի նյութերը ստանալու պահանջով դիմել է վերադաս մաքսային մարմին: Դատարանը տվյալ պատճառաբանությունը հարգելի է համարել, քանի որ Հայցվորի՝ Հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքից ներկայացրած քաղվածքից ակնհայտ է, որ նա չի տիրապետել իր նկատմամբ կայացված որոշմանն ու ծանոթ չի եղել դրա բովանդակությանը և իր ենթադրյալ իրավունքի վերականգման ուղղությամբ չի դրսևորել անգործություն և Վարչական

² Տե՛ս, ՎԴ/2885/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932899,

ՎԴ5/0186/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941075

³ ՎԴ/4687/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934849, ՎԴ2/0148/05/19 http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934681

⁴ Տե՛ս, ՎԴ/1283/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931185

դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված երկամսյա ժամկետում քայլեր է ձեռնարկել իր իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Դիտարկված գործերից 27-ով (12 %-ը) Հայցվորն օրենքի ուժով ազատված է եղել պետական տուրք վճարելու պարտավորությունից:

Դիտարկված գործերից 4-ով ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու միջնորդություն: Ներկայացված միջնորդությունները բավարարվել են: Որպես հիմնավորում Դատարանը հիմնականում հաշվի է առել այն հանգամանքը, որ ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը վարչական ակտերով բռնագանձումների բաժնի կողմից կայացրած որոշմամբ հայցվորին պատկանող անշարժ, շարժական գույքերի և դրամական միջոցների նկատմամբ կիրառվել են արգելանքներ, որոնք պահպանվում են մինչ օրս և նա հարկադրաբար զրկված է իր դրամական միջոցները տնօրինելու հնարավորությունից, իսկ Հայցվորը տվյալ պահին չի աշխատում և այդ պահին չունի դրամական խնայողություն, հետևաբար պետական տուրք վճարելու հնարավորություն Հայցվորը այդ օրվա դրությամբ ակնհայտորեն չունի, դատարանը գտել է, որ այն պետք է բավարարել⁵: Մեկ այլ գործով Դատարանը բավարարել է պետական տուրքի վճարումը հետաձգելու միջնորդությունը, քանի որ Հայցվորը գործագուրկ էր, որը հաստատվել է համապատասխան տեղեկանքով⁶:

Դիտարկված գործերից մեկով Հայցվորն է ներկայացրել հայցի ապահովման միջնորդություն, իսկ 6-ով՝ Պատասխանողը: Ընդհանուր առմամբ, ներկայացված միջնորդություններից 5-ը մերժվել են, իսկ 2-ը՝ բավարարվել:

Պատասխանողը գործերից մեկով⁷ որպես չվճարված հարկային պարտավորության գանձման ապահովման միջոց կիրառելու հիմնավորում նշել է այն հանգամանքը, որ Հայցվոր ընկերության կողմից առկա է անմիջական վտանգ դրամական պարտավորությունը չկատարելու մասով: Այնինչ, թե՛ ՀՀ վարչական դատարանը, թե՛ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանն արձանագրել են, որ դատական պաշտպանության դիմելով՝ Հայցվորն ընդամենը իրացրել է իր արդար դատաքննության իրավունքը, որը չի կարող վկայել վերջինիս կողմից ապագայում ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու մասին: Պատասխանողի տվյալ տրամաբանությամբ կստացվեր, որ բոլոր գործերով հայց ներկայացնելու դեպքում առաջանում է վտանգ դրամական պարտավորությունը չկատարելու հետ կապված, սակայն դատական պաշտպանություն իրացնելու իրավունք ունեն բոլորը և դրա միջոցով իրավունքն իրացնելը երբևէ չի կարող դիտվել որպես պարտավորությունների հետագա կատարումից խուսափում:

⁵ Տե՛ս, օրինակ, ՎԴ/0232/05/20, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809942376


⁶ Ի նկատի է ունեցվել գործագուրկ, սակայն սոցիալական ծառայությունից տրված տեղեկանքում նշվել է անգործունակ: Տե՛ս, ՎԴ5/0062/05/19,

http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932027

⁷ Տե՛ս, ՎԴ/4556/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934719

14 գործերով դատավարությանը ներգրավված է եղել նաև երրորդ անձ, որից 8-ի դեպքում դատարանի որոշումը հասանելի չի եղել դատալեքսում: Երրորդ անձինք գործերից 5-ի դեպքում ներգրավվել են դատարանի նախաձեռնությամբ, իսկ մնացած դեպքերում իրենց դիմումի հիման վրա: Ընդ որում, երրորդ անձ ներգրավելու դատարանի հիմնավորումը եղել է այն, որ գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտը կարող է տարածվել երրորդ անձի (հիմնականում ՀՀ ֆինանսների նախարարության) վրա և շոշափել վերջինիս իրավունքները, հետևաբար՝ Դատարանը եզրակացրել է, որ անհրաժեշտ է տվյալ անձին գործով դատավարության մեջ ներգրավել՝ որպես երրորդ անձ: Նշված 14 գործերից 9-ով երրորդ անձը չի մասնակցել դատավարությանը, և միայն 5 գործով է հայտնել որևէ դիրքորոշում հայցի վերաբերյալ:

Դիտարկված գործերի քննության շրջանակներում հիմնականում նշանակվել է 3 նիստ, ներառյալ՝ վճռի հրապարակումը: Մասնավորապես, 2 նիստ՝ 60 գործով, 3 նիստ՝ 65 գործով, 4 նիստ՝ 44 գործով, 29 գործով տեղի է ունեցել 5 նիստ, 22 գործով՝ 5 ից ավելի նիստ: Նախնական նիստեր նշանակվել են գործերից միայն 115-ով:




Դիտարկված ժամանակահատվածում 11 չկայացած նիստերի հիմնական պատճառը եղել է Կորոնավիրուսային հիվանդության տարածմամբ պայմանավորված ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված սահմանափակումները՝ 11 նիստ, 4 նիստի դեպքում՝ դատավորը մասնակցում էր վերապատրաստման դասընթացներին, 4-ի դեպքում՝ դատավորը վատառողջ է եղել, իսկ 1-ի դեպքում՝ դատավորը հրավիրված է եղել Բարձրագույն դատական խորհուրդ հարցազրույցի:

Դիտարկված գործերի տևողությունը վարույթ ընդունելու պահից մինչև վճռի հրապարակումը ժամկետների առումով բազմազան է: Միայն 5 գործերի դեպքում է քննությունը կասեցված եղել, որից 4-ի դեպքում անհնարին է եղել տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով որոշում, վճիռ կամ դատավճիռ կայացնելը⁸, իսկ 1-ի դեպքում՝ փորձաքննություն նշանակված

⁸ ՎԴ/0102/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929855, ՎԴ/1503/05/19 http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931422, ՎԴ/0803/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930679, ՎԴ/3686/05/19, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933740

լինելու հիմքով⁹: Գործի քննությունը շարունակելու անհնարինությունը բոլոր 4 գործերով կապված է եղել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՀՀ սահմանադրական դատարան (այսուհետ՝ ՄԴ) ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ դիմում ներկայացնելու հետ:



Դիտարկված գործերից որևէ մեկով չի կիրառվել արագացված դատաքննություն, իսկ գործերից 3-ի դեպքում կայացվել է գրավոր դատաքննություն անցկացնելու մասին որոշում, որը պայմանավորված է եղել երկրում ստեղծված համաճարակային իրադրությամբ¹⁰:

Դիտարկված գործերից միայն մեկով է կայացվել մասով վարույթը կարճելու վերաբերյալ որոշում, մասով՝ վճիռ¹¹: Գործի վարույթը կարճվել է՝ արձանագրելով, որ հայցը ներկայացվել էր ակնհայտորեն դրա իրավունքը չունեցող անձի կողմից:

Դիտարկված գործերից 88-ով (40%-ը) Դատարանը գործը վարույթ ընդունելիս առանձին որոշմամբ պահանջել է վարչական վարույթի նյութերը:


Գործերից 16-ի դեպքում հրավիրված են եղել վկաներ: Տվյալ գործերով հիմնականում քննարկվել են աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու և (կամ) սահմանված ժամկետում աշխատողի համար գրանցման հայտ չներկայացնելու հիմքով հարուցված վարչական վարույթի իրավաչափությունը:

Դիտարկված գործերից 187-ով (85 %-ը) վճիռը բողոքարկվել է, որից 136-ը՝ Պատասխանողի կողմից, 47-ը՝ Հայցվորի կամ վերջինիս ներկայացուցչի, իսկ 3-ը՝ երրորդ անձի կողմից:

Գործերի մեծ մասով՝ 213 (95.5 %-ը) գործով, կայացված է եղել վարչական ակտ, իսկ մնացած մասով՝ ոչ: 35 (16 %-ը) գործով արձանագրվել է, որ հասցեատերը ծանուցված չի եղել վարչական վարույթի մասին:

⁹ ՎԴ/4241/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934321
¹⁰ ՎԴ/1530/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931472, ՎԴ/2697/05/19 http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932767, ՎԴ/3686/05/19, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933740
¹¹ ՎԴ5/0062/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932027

Գործերի մի մասում վճռում առկա են հղումներ ՀՀ սահմանադրությանը (64 գործով), միջազգային պայմանագրերի /Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա/ (44 գործով), Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերի (21 գործով), ՄԴ որոշումների (27 գործով), ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների (49 գործով):



Դիտարկված գործերից 150-ում (68 %-ը) Դատարանն անդրադարձել է Հայցվորի կողմից բարձրացված բոլոր փաստարկներին և ապացույցներին, 65-ում (29,5-ը %)՝ անդրադարձել է փաստարկների մի մասի միայն, իսկ 5-ի դեպքում (2 %-ը)՝ ոչ մի փաստարկի չի անդրադարձել: ՀԴՄ կիրառության և (կամ) ՀԴՄ միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու հիմքով ներկայացված հայցերով Դատարանն անդրադարձել է Հայցվորի կողմից հնչեցված փաստարկներից մեկին՝ հանձնարարագրի իրավական հիմքին կամ ոչ մի փաստարկի չի անդրադարձել, այլ ի պաշտոնե քննության արդյունքում տվյալ հիմքն արդեն իսկ բավարար է համարել հայցը բավարարելու համար: Նման դեպքում Դատարանը գտել է, որ կարիք չկա անդրադառնալ Հայցվորի կողմից վկայակոչված այլ հիմքերի ու փաստարկների:

2. Վարչարարության իրականացման հետ կապված խնդիրներ

Դիտարկված գործերից 212-ի դեպքում (99,5%-ը) վիճարկվել է միջամտող վարչական ակտ, որից 206-ի դեպքում վարչական վարույթը հարուցվել է վարչական մարմնի նախաձեռնությամբ: Դրանցից 137-ը բավարարվել է:

Վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարույթների 33-ի հիմքում եղել է ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածով, 15-ի՝ ՀՀ հարկային օրենսգրքի 401 և 402-րդ հոդվածներով, 17-ի՝ ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումը:

Հայցվորի դիմումի հիման վրա հարուցված 6 վարույթները վերաբերել են այլ աշխատանքի տեղափոխելու, իր կողմից վճարված հարկի գումարը, որպես վարչարարությամբ պատճառված վնաս հատուցելու կամ վերադարձնելու, ապրանքները հայտարարագրելու, ընտանեկան ձեռնարկությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտ դիտարկելու պահանջին և այլն: Հատկանշական է, որ Հայցվորի դիմումի հիման վրա հարուցված վարույթների

շրջանակում կայացված վարչական ակտերի վիճարկման արդյունքում Դատարանի կողմից բավարարվել են միայն 3-ը, որից մեկը՝ մասնակի:

Դիտարկված գործերով արձանագրվել են մի շարք համակարգային բնույթ կրող վարչարարության իրականացման խնդիրներ, այդ թվում.

Վարչական ակտի հասցեատիրոջ լսված լինելու իրավունքի խախտման՝ վարչական վարույթի մասին ծանուցման միատեսակ խնդիրներ.

ա. վարչական վարույթի լուումների անցկացման մասին վարչական ակտի հասցեատիրոջը պատշաճ կերպով չծանուցելը:

Այսպես, դիտարկված գործերից 37-ի վերաբերյալ վճռում առկա է նշում, որ վարչական վարույթի լուումների անցկացման օրվա և ժամի մասին վարչական ակտի հասցեատիրոջը ծանուցվել է էլեկտրոնային եղանակով, ինչը գործերի նշանակալի մասի դեպքում պատշաճ ծանուցում չի համարվել Դատարանի կողմից այն հիմնավորմամբ, որ չկա որևէ ապացույց առ այն, որ հասցեատերը ստացել է իր էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված ծանուցումները:

Տվյալ խնդիրը հայտնաբերվել է հիմնականում հարկերի վճարումները ուշացնելու հիմքով հարուցված վարչական վարույթի գործերով: Ընդ որում, Դատարանը հայցը բավարարել է միայն տվյալ վարչարարության ընթացակարգային նորմի խախտման հիմքով և վարչական ակտը ճանաչել է անվավեր, իսկ վարչական ակտի բովանդակային մասին չի էլ անդրադարձել, ինչը երբեմն հիմք է հանդիսանում վարչական մարմնի համար անվավեր ճանաչված ակտի հիմքով գանձումներ կատարել՝ պատճառաբանելով, որ Դատարանը հայցը բավավարարել է լսված չլինելու՝ ընթացակարգային խախտման հիմքով, իսկ վարչական ակտի բովանդակային մասը՝ տուգանքի իրավաչափության հարցը, Դատարանը քննական առարկա չի դարձրել:

Նշված գործերով Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է նաև թիվ ՄԴՌ-1529 որոշմամբ արձանագրած դիրքորոշումը, որով ՀՀ ՄԴ-ն, անդրադառնալով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 66-րդ կետի Սահմանադրությանը համապատասխանության հարցին, նշել է. «Վերլուծելով հարկային մարմինների և հարկ վճարողների միջև էլեկտրոնային համակարգի միջոցով իրականացվող փաստաթղթերի շրջանառության վերաբերյալ պատշաճ ծանուցման պայմանների սահմանման հետ կապված հարաբերությունները կարգավորող համապատասխան նորմերը՝ ՄԴ-ն արձանագրում է 2 տարբերակված մոտեցումներ.

1՝ հարկային մարմինների կողմից հարկ վճարողներին էլեկտրոնային ծանուցման դեպքում ծանուցման ենթակա փաստաթուղթն ուժի մեջ է մտնում այն էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու օրվան հաջորդող օրվանից այն դեպքում, երբ հարկ վճարողների կողմից հարկային հաշվարկները էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելու օր է համարվում հարկային այդ հաշվարկի ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան էլեկտրոնային ծանուցագրում նշված օրը,

2՝ անձի կողմից պատշաճ ծանուցված լինելու փաստը պետք է հաստատվի հասցեատիրոջ կողմից ցանկացած եղանակով ակտը ստանալու հավաստման միջոցով:

Հիշյալ նորմերի վերլուծության արդյունքում ՄԴ-ն փաստում է, որ հարկ վճարողներին հարկային մարմնի կողմից պարտադիր ծանուցման ենթակա փաստաթուղթն էլեկտրոնային եղանակով ուղարկելը՝ առանց այդ փաստաթղթի մուտքագրումը հավաստող ծանուցագրի ստացման, չի կարող դիտարկվել բավարար պայման, որպեսզի հարկ վճարողը համարվի պատշաճ ծանուցված: Նման եզրահանգման համար հիմք կարող է լինել, մասնավորապես, բազմաթիվ տեխնիկական խնդիրների հետևանքով հարկ վճարողի կողմից նման ծանուցում չստանալու հավանականությունը: Մինչդեռ, պատշաճ վարչարարության տրամաբանությունից է բխում այն, որ պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթի՝ էլեկտրոնային եղանակով ոչ պատշաճ ծանուցումը կարող է հանդիսանալ հարկային մարմնի կողմից պատշաճ ծանուցման վերաբերյալ բողոքի դեմ ներկայացվելիք փաստարկ նույնիսկ այն դեպքում, երբ հարկային մարմինը որևէ տեղեկություն չունի հարկ վճարողին ուղարկված փաստաթղթի ծանուցման կամ հարկ վճարողի կողմից այդ փաստաթղթի ստացման վերաբերյալ, ինչը ողջամտորեն չի ապահովում հարկ վճարողի ծանուցված լինելու, հետևաբար՝ լսված լինելու իրավունքի արդյունավետ իրականացումը: Ուստի, Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի վիճարկվող 1-ին մասի 66-րդ կետի 2-րդ նախադասությունն այն մասով, որով հնարավոր է դարձնում հարկ վճարողների պատշաճ իրազեկումը սահմանափակել սոսկ նրա էլեկտրոնային փոստի հասցեին ծանուցման ենթակա փաստաթուղթ ուղարկելով՝ դրանով պայմանավորելով նաև հիշյալ փաստաթղթի ուժի մեջ մտնելը՝ առանց այն ստանալու մասին հավաստման, հակասում է Սահմանադրության 50-րդ հոդվածում ամրագրված՝ պատշաճ վարչարարության, հատկապես՝ անձի լսված լինելու իրավունքին՝ խախտելով նաև Սահմանադրության 75-րդ հոդվածով սահմանված պահանջները»:

Տվյալ խնդրի դեպքում Դատարանը հիմնականում միատեսակ մոտեցում է ցուցաբերում՝ արձանագրելով, որ տվյալ դեպքում Պատասխանողի կողմից Դատարանին չի ներկայացվել վարչական վարույթի մասին համապատասխան ծանուցագիրը Հայցվորի կողմից ստանալու փաստը հավաստող ապացույց, իսկ պարտադիր ծանուցման ենթակա փաստաթուղթն էլեկտրոնային եղանակով ուղարկելը, տվյալ դեպքում չի կարող դիտարկվել բավարար պայման, որպեսզի հարկ վճարողը համարվի պատշաճ ծանուցված այն պատճառաբանությամբ, որ առկա չէ հավաստում ծանուցագիրը Հայցվորի կողմից ստանալու վերաբերյալ, ուստի Դատարանը տվյալ դեպքում հիմնականում արձանագրում է, որ վարչական վարույթի ընթացքում խախտվել է Հայցվորի՝ լսված լինելու իրավունքը, ինչպես նաև բացակայում են վարչական վարույթի հարուցման և ընթացիկ փուլերը:

Այն բոլոր դեպքերում, երբ Հայցվորն ընդունել է իր կողմից էլեկտրոնային ծանուցումը ստացած լինելու փաստը, սակայն փաստարկ է ներկայացրել, որ այն պատշաճ համարվել չի կարող,

Դատարանը մերժել է Հայցվորի պահանջը՝ արձանագրելով, որ Հայցվորն ընդունել է իր կողմից էլեկտրոնային եղանակով ծանուցումը ստացած լինելու փաստը:

Ստացվում է, որ Դատարանը պարզապես չունի գործիքակազմ ստուգելու՝ արդյո՞ք վարչական ակտի հասցեատերը ստացել է ծանուցումը, թե ոչ, միայն հաստատվում է, որ ուղարկվել է ծանուցումը: Եթե համեմատական անցկացնենք փոստային առաքմամբ ծանուցումն ապահովելու հետ, ապա նույն տրամաբանությամբ միայն ծանուցումն ուղարկելը հավաստող անդորրագիրը չի կարող բավարար ապացույց համարվել այն հասցեատիրոջ կողմից ստանալու համար. նման դեպքում պատշաճ ծանուցումն ապահովված լինելու ապացույց կարող է համարվել միայն հետադարձ փոստային հավաստագիրը:

Նշված խնդրով խախտվել է հատկապես «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ վարչական մարմինը իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է այդ մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասը, ըստ որի՝ հարուցված վարչական վարույթի մասին հարկային մարմինը ծանուցում է էլեկտրոնային եղանակով, որն իրականացվում է ծանուցագիրը հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու, իսկ դրա բացակայության դեպքում՝ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով: Ընդ որում, օրենսդիրը սահմանել է, որ էլեկտրոնային ծանուցման միջոցով իրազեկված պարտադիր ծանուցման ենթակա փաստաթուղթն ուժի մեջ է մտնում այն էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու կամ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող օրվանից:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ մի քանի դատական ակտերով Դատարանը հայցը մերժել է այն պատճառաբանությամբ, որ Հայցվորն ըստ էության ընդունել է իր էլեկտրոնային հասցեն գործելու և օգտագործվելու ու փաստացի վիճարկվող որոշումը դրա միջոցով ստանալու փաստերը, սակայն պնդում է, որ մինչ այդ իրեն ուղարկված ծանուցումը չի ստացել¹²: Դատարանը նաև հիմնավորել է, որ օրենքը նախատեսում է էլեկտրոնային համակարգի միջոցով փաստաթղթերի ընդունում (որը տվյալ դեպքում արվել է, և դրա իրավաչափությունը Հայցվորի կողմից չի վիճարկվել, ինչից հետևում է, որ այդ հարցը դուրս է գործի քննության սահմաններից), ապա դրանց ծանուցումը ևս պետք է իրականացվի էլեկտրոնային եղանակով, քանի որ էլեկտրոնային փաստաթուղթը չի կարող ուղարկվել փոստով (այն ֆիզիկապես գոյություն ունի էլեկտրոնային համակարգում, այլ ոչ թե թղթային կրիչի վրա, որով էլ տարբերվում է դրանից): Հետևաբար, ՀՀ հարկային օրենսգրքի շրջանակներում վարչական վարույթների նկատմամբ «Վարչական հիմունքների և վարչական

¹² Տե՛ս, օրինակ, ՎԴ/3688/05/19, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933751

վարույթի մասին» ՀՀ օրենքի կիրառման է ենթակա՝ հաշվի առնելով նաև հիշյալ առանձնահատկությունները:

Ըստ էության, Դատարանը ղեկավարվել է այն կանխավարկածով, որ վարչական ակտը նույն էլեկտրոնային հասցեով ստացած լինելու դեպքում, հասցեատերը կարող է ստացած լինել նաև վարչական վարույթի լսումների մասին ծանուցումը, ուստի նման հիմնավորմամբ մերժվել են մի քանի հայցերը: Սակայն այս մոտեցումը ընդունելի չէ այն հիմնավորմամբ, որ վարչական ակտը հասցեատերը կարող է ստանալ այն վիճարկելու համար նախատեսված երկամսյա ժամանակահատվածում, այսինքն՝ անձն ունի ողջամիտ ժամկետ էլեկտրոնային փոստի հասցե մուտք գործելու և ծանուցումը ստանալու համար, և հավանական է այդ ժամկետում էլեկտրոնային հասցե մուտք գործելու հնարավորությունը, այնինչ վարչական վարույթի հարուցման վերաբերյալ ծանուցումը ստանալու համար անձը չունի այդպիսի հնարավորություն: Բացի այդ, հավանական է, որ հասցեատերը տեխնիկական խնդիրների պատճառով կարող էր չստանալ լսումների վերաբերյալ ծանուցումը, իսկ վարչական ակտը ստանալու վերաբերյալ փաստի մասին տեղեկությունը չի կարող ապացուցել նաև լսումների վերաբերյալ ծանուցված լինելու փաստը: Ուստի անձի լսված լինելու իրավունքը պետք է ապահովվի ոչ թե կասկած հարուցող կանխավարկածով, այլ կոնկրետ ապացույցով:

Հատկանշական է այն հանգամանքը, որ Դատարանը ծանուցումը դիտարկել է որպես էլեկտրոնային փաստաթուղթ և իրավաչափ է համարել այն էլեկտրոնային եղանակով ուղարկելու տարբերակը, այնինչ չի անդրադարձել այդ նույն եղանակով ուղարկված վարչական ակտին, մասնավորապես այն հարցին, թե արդյո՞ք վարչական ակտը ևս էլեկտրոնային փաստաթուղթ է, և այն նույն եղանակով ուղարկված լինելն իրավաչափ է, թե՛ ոչ:

Մի շարք գործերով Դատարանը նկատել է նաև, որ էլեկտրոնային փոստի հասցեն Հայցվորին պատկանելը հավաստված չէ, և առկա է ողջամիտ կասկած նման փոստային հասցեին հասցեագրված հաղորդագրություններին իրազեկվելու հնարավորության վերաբերյալ, ինչպես նաև ծանուցագրի վրա առկա չէ էլեկտրոնային ստորագրություն¹³:

Այս առումով կարևոր է վարչական մարմնի կողմից վարչական վարույթի թափանցիկությունն ապահովելը, վարչական ակտի հնարավոր հասցեատիրոջը չի կարելի պահել անորոշության մեջ: Վարչական վարույթի ծածուկ անցկացումն անթույլատրելի է: Իրավական պետությունում վարչարարությունը թափանցիկ է և բաց է դրանում ընդգրկված անձի առջև: Վերջինս ոչ թե վարչական վարույթի օբյեկտ է, այլ մասնակից, որի ներգրավումը վարչական վարույթին կայացվելիք որոշման նյութաիրավական ճշտության հիմնական նախապայմանն է:

Տվյալ համակարգային խնդիրը լուծելու հետ կապված ՀՀ ՊԵԿ-ը ծրագրի թիմի հետ հանդիպման ժամանակ հայտնել է, որ պատրաստվում են ներկայացնել օրենսդրական փոփոխությունների նախագիծ, որում հստակ նախատեսված կլինեն տնտեսվարող

¹³ Տե՛ս, ՎԴ/3675/05/19, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933749

սուբյեկտներին էլեկտրոնային եղանակով ծանուցելու հետ կապված օրենսդրական մեխանիզմները: Մասնավորապես, ներդրվելու է էլեկտրոնային համակարգ, որը հնարավորություն կտա պարզելու, թե արդյո՞ք ուղարկվող ծանուցումները ստացվել են հասցեատիրոջ կողմից, թե ոչ, ինչպես նաև տվյալ դեպքում լսումներ հրավիրելու ժամկետը կլինի ոչ թե 3 օր, այլ 5 օր անց:

բ. վարչական իրավախախտման մասին արձանագրությունը օրենքով նախատեսված պահանջների խախտմամբ կազմելը.

Աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու և (կամ) սահմանված ժամկետում աշխատողի համար գրանցման հայտ չներկայացնելու հիմքով բոլոր գործերով հայցերը բավարարվել են այն հիմքով, որ վարչական մարմինը անձանցից գրավոր բացատրություն վերցնելիս չի ներկայացրել իրենց իրավունքները, այդ թվում՝ նաև արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու իրավունքը:

Դատարանն ակտի իրավաչափության ստուգման տեսանկյունից կարևորել է հետևյալ հարցերի բացահայտումը.

- 1) արդյո՞ք ստուգումն իրականացվել է սահմանված կարգով, թե՛ ոչ,
- 2) արդյո՞ք ակտի նախագծի վերաբերյալ առարկություն ներկայացված լինելու պայմաններում վարչական մարմնի կողմից ակտում դրան բովանդակային անդրադարձ չկատարելը կարող է հանգեցնել որևէ իրավունքի խախտման, թե՛ ոչ:

Դատարանի համոզմամբ, տնտեսվարող սուբյեկտի մոտ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու և (կամ) նոր աշխատողի համար սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստն արձանագրելիս իրավասու մարմնի պաշտոնատար անձինք պետք է հաջորդաբար իրականացնեն ՀՀ կառավարության 28.09.2017թ. թիվ 1214-Ն որոշմամբ սահմանված Կարգի 4-րդ կետում նկարագրված քայլերը: Հարկային մարմնի կողմից հաջորդաբար չեն կատարվել ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստն արձանագրելու կարգի 4-րդ կետում նկարագրված գործողություններն առ այն, որ գործատուից չեն պահանջվել աշխատանք կատարած անձանց աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը կամ գրավոր պայմանագրերը կամ գործատուի կողմից հաստատված հաստիքացուցակը և քայլեր չեն ձեռնարկվել գործատուի, ինչպես նաև անհատ ձեռնարկատիրոջ մոտ ստուգման պահին աշխատանք կատարած անձանց համաձայնությամբ նրանցից համապատասխան բացատրություն և հայտարարություններ վերցնելու կամ բացատրություն տալուց հրաժարվելու իրավունքի մասին գործատուին տեղեկացնելու պարտականությունը կատարելու ուղղությամբ:

Դատարանը տվյալ խախտումները գործերի զգալի մասով արձանագրել է նաև՝ ելնելով վկաների ցուցմունքներից, որոնք հայտնել են, որ իրենց որևէ փաստաթուղթ չի ներկայացվել

ստորագրման, հետևաբար խախտվել է ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի դրույթներով սահմանված արձանագրությանն առաջադրված պահանջները:

Նկատելի են նաև արձանագրությունը ենթադրյալ իրավախախտի ներկայությամբ կազմված և ընթերցված չլինելու հետ կապված խախտումները: Իսկ տվյալ խախտումը բացահայտել է Դատարանը, քանի որ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրությունից հետևել է, որ այն կազմվել և ստորագրվել ՊԵԿ-ի տեսուչի կողմից, իսկ հասցեատերը ներկա չի գտնվել դրա կազմմանը: Հետևաբար, նշված արձանագրությունը կազմելուց հետո այն չի ընթերցվել Հայցվորի կողմից, ինչպես նաև վերջինս զրկվել է ՀՀ մաքսային օրենսգրքի 226-րդ հոդվածով իրեն վերապահված իրավունքների իրացման հնարավորությունից: Նշված խախտումն իրավաչափորեն հանգեցրել է նաև վարչական ակտի անվավերության¹⁴:

Բացի այդ, մի շարք դեպքերում Դատարանն արձանագրել է, որ իրավախախտման արձանագրությունը կազմվել է օրենսդրության պահանջների խախտմամբ այն հիմնավորմամբ, որ հսկիչ գնումն իրականացվել է այլ հարկային տեսուչի կողմից, մինչդեռ արձանագրությունը կազմվել և ստորագրվել է մեկ ուրիշ հարկային տեսուչի կողմից, և նշված արձանագրությունը ստորագրված չի եղել նույն արձանագրությամբ վկայակոչված հսկիչ գնում կատարած անձի կողմից, հետևաբար խախտվել է ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված՝ արձանագրությունը հսկիչ գնում կատարող անձի կողմից ստորագրելու պահանջը:

ՀԴՄ-ի կիրառության և (կամ) ՀԴՄ-ի միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու հիմքով հարուցված վարչական վարույթների մի մասով Դատարանն արձանագրել էր, որ ստուգման հանձնարարագրի օրինակը հասցեատիրոջը չի հանձնվել: Մասնավորապես, տվյալ խախտումը Դատարանի կողմից հայտնաբերվել է, քանի որ հանձնարարագիրը ներկայացվել է փոստային եղանակով, Հայցվորը նշել է որ չի պահպանվել ստուգման հանձնարարագիրը ծանոթացման ներկայացնելու ընթացակարգը, իսկ վարչական վարույթի նյութերում առկա հանձնարարագրի օրինակի վերջնամասում ձեռագիր կատարված են «Հրաժարվեց ստանալուց» գրառումները, իսկ հայցվորի՝ փոստով ստացված օրինակի վրա հանձնարարագիրը հանձնելու հատվածում որևէ գրառում առկա չէ:

Վարչարարության օրինականության սկզբունքի խախտում. լիազորությունների վերազանցում.

ՀԴՄ-ի կիրառության և (կամ) ՀԴՄ-ի միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու հիմքով հարուցված վարչական վարույթն իրականացնելիս Դատարանը գործերի զգալի մասով արձանագրել է վարչական մարմնի կողմից լիազորությունների վերազանցման խնդիրը՝ որպես վարչարարության առանցքային խնդիր՝ չանդրադառնալով

¹⁴ ՎԴ/2395/05/19, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932403

նույնիսկ Հայցվորների կողմից նշված վարչական ակտի անվավերության մյուս փաստարկներին:

ՀԴՄ-ի կիրառության և (կամ) ՀԴՄ-ի միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու հիմքով բոլոր գործերով բարձրացված է եղել այն հարցը, որ ստուգման համար հիմք հանդիսացած հանձնարարագրերում նշված էր ՀՀ հարկային օրենսգրքի 335-րդ հոդվածը, այնինչ հարկային տեսուչները, դուրս գալով տվյալ իրավակարգավորամբ իրենց տրված լիազորությունների շրջանակից, կատարում էին հսկիչ գնումներ, որպիսի լիազորությունը նախատեսված է ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածով: Ընդ որում, բոլոր գործերով հիշյալ հիմքով ներկայացված հայցերը բավարարվել են տվյալ հիմնավորմամբ: Չնայած Հայցվորները որոշ գործերով չէին հիշատակում հանձնարարագրում հսկիչ գնում իրականացնելու համար համապատասխան իրավական հիմքը նշված չլինելու հանգամանքը, այդուհանդերձ, Դատարանը գործն ի պաշտոնե քննելիս տվյալ հիմքով բավարարում էր հայցը՝ երբեմն նույնիսկ չանդրադառնալով հայցի հիմքում ընկած այլ փաստարկներին: Հատկանշական է, որ ուսումնասիրության ողջ ժամանակահատվածում հարկային մարմինը տվյալ ստուգումն իրականացնելու համար հանձնարարագրեր տրամադրելիս դրանում որպես իրավական հիմք նշում էր ՀՀ հարկային օրենսգրքի 335-րդ հոդվածը:

Այս առումով տարբերվող են հատկապես երկու դատավորների մոտեցումները, ըստ որոնց՝ լիազորությունների վերազանցման խնդիր առկա չէ, և տվյալ իրավական հիմքով վարչական մարմինը կարող է իրականացնել հսկիչ գնում: Այդուհանդերձ, գտնում ենք, որ վարչական մարմինը դատարանների կողմից նման գրեթե միատեսակ պրակտիկան նկատելուց հետո կարող է որպես իրավական հիմք նշել նաև ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածը, քանի որ միանշանակ չէ այն հանգամանքը, որ վերաքննության կարգով բողոքարկվելուց հետո վերադաս դատական ատյանները, մասնավորապես ՀՀ վճռաբեկ դատարանը այլ կերպ կմեկնաբանի տարրնկալման տեղիք տվող ՀՀ հարկային օրենսգրքի 335-րդ հոդվածը:

Ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները սահմանված ժամկետում չվերադարձնելու, հետ չընդունելու կամ կորստի հիմքով հարուցված վարչական վարույթներից մեկով ևս խախտվել է ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված վարչարարության օրինականության սկզբունքը, մասնավորապես տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ ՀՀ հարկային օրենսգրքի 422-րդ հոդվածով սահմանված տուգանքը հաշվարկվել և գանձման է առաջադրվել նույն օրենսգրքի՝ «Համալիր հարկային ստուգումների հաճախականությունը» վերտառությամբ 337-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ և «Վերստուգումները» վերտառությամբ 338-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերով սահմանված դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթի շրջանակներում, իսկ տուգանք առաջադրած տեսուչների լիազորությունները բացակայել են¹⁵:

¹⁵ ՎԴ/4920/05/19, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935119

Լիազորությունների վերազանցում է թույլ տրվել նաև հարկային ծառայողին ոչ իրավաչափորեն մեկ այլ պաշտոնի նշանակելով, մասնավորապես գործող օրենսդրությամբ որևէ իրավակարգ սահմանված չի եղել, որ հարկային ծառայության Գ խմբում թափուր պաշտոն առաջանալու դեպքում, հարկային մարմնի ղեկավարը կարող է այդ պաշտոնում նշանակել Բ խմբով սահմանված պաշտոն ունեցող անձին, նման լիազորություն սահմանված չէ նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքով¹⁶: Այդպիսի պաշտոնում կարող էին նշանակվել միայն Գ և Դ խմբերում նշված պաշտոններ ունեցող հարկային ծառայողները: ՊԵԿ-ը որևէ օրենսդրական նորմով սահմանափակված չի եղել հայցվորին նշանակելու ցանկացած այլ աշխատանքի, քանի որ ՀՀ աշխատանքային օրենսգրքով նման դեպքերում գործատուի համար որևէ պարտավորություն չի սահմանում: Տվյալ դեպքում վիճարկվող Հրամանի 1-ին կետն ընդունվել է «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, որով սահմանված չէ, որ հարկային ծառայության Գ խմբում թափուր պաշտոն առաջանալու դեպքում, հարկային մարմնի ղեկավարը կարող է այդ պաշտոնում նշանակել Բ խմբով սահմանված պաշտոն ունեցող անձին:

Վարչարարության օրինականության սկզբունքն իրենից ենթադրում է, որ վարչական մարմինները սահմանափակված են օրենքներով երկու իմաստով. նրանք պետք է կիրառեն օրենքները և չխախտեն դրանց պահանջները: Օրենքների կիրառման լիազորությունը՝ կաշկանդված կամ հայեցողական լիազորության տեսքով, նույնպես պետք է ամրագրված լինի օրենքներում: Այլ կերպ ասած, օրենքը պետք է լիազորի վարչական մարմնին գործելու կամ չգործելու: Այն, թե արդյոք վարչական մարմինը կարող է գործել, թե պարտավոր է ձեռնպահ մնալ որևէ գործողությունից, պետք է այդ մարմնին պարտադիր վերապահվի օրենքով: Սա վարչարարության օրինականության սկզբունքի առաջին բաղադրիչն է: Օրենքի վերապահման ենթասկզբունքը: Հետևաբար, վարչական մարմինը պետք է գործի միայն օրենքի առկայությամբ և օրենքի հիման վրա: Իսկ թե ինչպես պետք է գործի վարչական մարմինը, որոշվում է օրենքի գերակայության ենթասկզբունքի միջոցով, որը օրինականության երկրորդ բաղադրիչն է: Դրա ուժով վարչարարությունն ըստ ձևի և բովանդակության պետք է ենթարկվի, ստորադասվի օրենքի պահանջներին, այսինքն, պետք է չհակասի դրան՝ ապահովելով դրա պահպանումն ու իրացումը:

Վարչական մարմինը այժմ տվյալ խնդիրը լուծելու հետ կապված որոշակի միջոցներ է ձեռնարկել, մասնավորապես դատարանների կողմից նման համակարգային խնդիր արձանագրվելուց հետո ՊԵԿ-ը ներկայումս տրվող ՀԴՄ ստուգման հանձնարարագրերում նշում է նաև ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածը: Չնայած ՊԵԿ-ը նաև մտահոգություններ է արտահայտել, որ հնարավոր է՝ Դատարանի դիրքորոշումը լինի առանձին հանձնարարագիր տալը, այլ ոչ թե միննույն հանձնարարագրում երկու տարբեր լիազորություններ նախատեսելը:

Վարչական վարույթի ժամկետների հետ կապված խնդիրներ.

¹⁶ ՎԴ6/0060/05/19, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936372

ա/ Վարչական տույժ նշանակելու համար նախատեսված ժամկետի բացթողում.

Տվյալ խնդիրը հատկապես հանդիպել է մաքսային իրավախախտման հիմքով հարուցված վարչական վարույթների, մասնավորապես մաքսային արժեքի պակաս հայտարարագրման կամ ապրանքների սխալ հայտարարագրման դեպքերում:

Ժամկետների ճիշտ հաշվարկման համար տվյալ դեպքում կարևորվում է իրավախախտումը հայտնաբերելու պահը, քանի որ ՎԻՎ օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է, որ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը հայտնաբերվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելու օրվանից 3 տարվա ընթացքում: Այնինչ, վարչական մարմինը գործերի գերակշիռ մասով իրավախախտումը հայտնաբերելու պահը հաշվարկել է ոչ թե կամերալ ստուգման կամ ստուգման ակտը կայացնելու, այլ իրավախախտման արձանագրությունը կազմելու օրվանից: Տրամաբանական է, որ իրավախախտումը հայտնաբերվում է ստուգումներ իրականացնելու ժամանակ, որի դեպքում խախտում հայտնաբերելիս սահմանված կարգով հարուցվում է վարչական վարույթ և կազմվում է արձանագրություն, իսկ խախտում չհայտնաբերվելու դեպքում այդպես էլ վարչական վարույթ չի հարուցվում:

Մաքսային իրավախախտումների հայտնաբերմանն ուղղված գործունեությունն է հանդիսանում կամերալ ստուգման անցկացումը, իսկ իրավախախտման փաստեր հայտնաբերելու դեպքում, այդ փաստերը ձևակերպվում են ստուգման ակտում, հետևապես՝ մաքսային իրավախախտման հայտնաբերման պահը օրենսդրորեն սահմանվում է և պետք է դիտարկել կամերալ ստուգման արդյունքում կազմված ակտի կայացման պահը: Այդուհանդերձ ՊԵԿ-ը բոլոր դեպքերում շարունակել է ներկայացնել փաստարկ առ այն, որ մաքսային իրավախախտման հայտնաբերման պահ պետք է համարել վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն կազմելու պահը, ինչը Դատարանն անհիմն է համարել:

Հատկանշական է, որ գործերից մեկով¹⁷ Պատասխանողը դիրքորոշում է հայտնել, որ ժամկետը երկարաձգվել է, քանի որ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված դեղորայքի նկարագիրը և շուկայական արժեքը որոշելու նպատակով նշանակվել է քիմիական և ապրանքագիտական համալիր փորձաքննություն: Նշված որոշման հետազոտումից պարզվել է նաև, որ որոշումն ընդունվել է՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՎԻՎ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված երկամսյա ժամկետը լրանում է, սակայն դեռևս չի ստացվել փորձագետի եզրակացությունը: Այնինչ Դատարանն արձանագրել էր, որ ՎԻՎ օրենսգրքի 37-րդ հոդվածով կարգավորվում են ոչ թե վարչական վարույթի իրականացման ժամկետները (վերջիններս կարգավորվում են ՎԻՎ օրենսգրքի 277-րդ հոդվածով), այլ վարչական տույժ նշանակելու

¹⁷ ՎԴ/5875/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936116

Ժամկետները: Վարչական մարմինն իրավասու չէ կարգավորելու ՎԻՎ օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված վարչական տույժ նշանակելու ժամկետները երկարացնելու հարցը: Վարչական վարույթի ժամկետի երկարացումը չի հանգեցնում ՎԻՎ օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված վարչական տույժ նշանակելու ժամկետների երկարացմանը: Փորձագետի եզրակացությունն ստացված չլինելու հանգամանքը, ՎԻՎ օրենսգրքի 37-րդ հոդվածով իմաստով, չի կարող հիմք հանդիսանալ ժամկետն այլ կարգով հաշվարկելու համար:

Այդ նույն սկզբունքով գործերից մեկով¹⁸ որպես փաստարկ Պատասխանողը նշել էր նաև, որ կասեցված է եղել վարչական վարույթը, ինչը հիմք է վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի համարելու համար, այնինչ, Դատարանը փաստել է, որ «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի հիմքով վարչական վարույթի կասեցումը վերաբերում է վարույթի ժամկետներին, ինչը չի կարող կասեցնել ՎԻՎ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները:

Ստացվում է, որ վարչական մարմինը կարող էր նկատել վաղեմության ժամկետը բաց թողնելու հանգամանքը և անհիմն չձանրաբեռներ Դատարանին՝ ազատելով անձանց վարչական պատասխանատվությունից, քանի որ վաղեմության ժամկետն անցնելը վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանք է, վարչական պատասխանատվությունից ազատելը վարչական մարմնի պարտականությունն է, այլ ոչ թե հայեցողական լիազորությունը:

բ/ վարչական ակտը հարկադիր կատարման ներկայացնելու համար ժամկետի բացթողում.

Մշտադիտարկված գործերից մեկով նկատվել է, որ ՊԵԿ-ը վարչական ակտն ուղարկել է հարկադիր կատարման այն անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետի բացթողնմամբ: Միաժամանակ, «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Տվյալ պարագայում պատասխանող վարչական մարմինը չի ներկայացրել ակտը հարկադիր կատարման ներկայացնելուն ուղղված գործողություններն իրավաչափ լինելու վերաբերյալ ապացույցներ կամ փաստարկներ, ավելին, որոշմամբ ընդունել է, որ վարչական ակտի բողոքարկման համար սահմանված է երկամսյա ժամկետ, հետևապես՝ վարչական ակտը կարող էր կատարման ներկայացվել նշված ժամկետի ավարտից հետո՝ եռամսյա ժամկետում, ինչը վկայում է այն մասին, որ Պատասխանողն անուղղակիորեն ընդունել է կատարման

¹⁸ ՎԴ/11293/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809942072

ներկայացնելուն ուղղված գործողությունների ոչ իրավաչափ լինելը: Դատարանի վերոշարադրյալ փաստական և իրավական հիմնավորումներով հաստատվել է, որ վարչական ակտը հարկադիր կատարման ներկայացնելուն ուղղված ՊԵԿ գործողությունները ոչ իրավաչափ են¹⁹:

Վարչական վարույթի հարուցման և ընթացիկ փուլերի բացակայություն

Մշտադիտարկված գործերից մեծ մասով վարչական վարույթի հասցեատիրոջը ծանուցելու պարտականությունը չիրացնելը հանգեցրել է վարչական վարույթի հարուցման փուլերի խախտմանը: Հիշյալ գործերով վարչական վարույթը սահմանափակվել է միայն ընթացիկ և եզրափակիչ փուլերով: Մասնավորապես, վարույթի նյութերում բացակայել է վարույթ հարուցելու, դրա մասին հայցվորին ծանուցելու և վարչական վարույթի ընթացքում լսումներ իրականացնելու վերաբերյալ որևէ ապացույց:

Ըստ հիմնական կանոնի՝ վարչական վարույթը պետք է իրականացվի երեք փուլով, որպեսզի հնարավոր լինի պատշաճ կերպով ծանուցել վարույթի մասնակիցներին վարույթի հարուցման վերաբերյալ, այնուհետև լսել նրանց փաստարկները, ձեռք բերել անհրաժեշտ ապացույցներ, որոնց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում միայն ավարտել վարույթը՝ կայացնելով հիմնավորված վարչական ակտ: Վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը վարույթին մասնակից անձին պետք է տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին²⁰:

Հիշյալ գործերով դատարանն արձանագրել է, որ որոշումը կայացնելուն ուղղված վարչական վարույթը սահմանափակվել է միայն ընթացիկ և եզրափակիչ փուլերով: Մասնավորապես, վարույթի նյութերում բացակայել է վարույթ հարուցելու, դրա մասին հայցվորին ծանուցելու և վարչական վարույթի ընթացքում լսումներ իրականացնելու վերաբերյալ որևէ ապացույց: Տվյալ գործերով բացակայել է նաև հրատապ վարչական ակտ կայացնելու անհրաժեշտությունը՝ առկա չի եղել նաև անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու դեպքը, ինչպես նաև առկա չի եղել որևէ այլ իրավական հիմք, որը կնախատեսեր վարչական վարույթի սահմանափակում միայն ընթացիկ և եզրափակիչ փուլերով: Վարչական մարմինը պարտավոր էր լիարժեք վարույթ իրականացնել՝ երեք փուլերով, հայցվորներին ծանուցել վարույթի հարուցման մասին, այնուհետև լսումներ հրավիրել՝ ապահովելով վերջինիս արտահայտվելու իրավունքի իրացվելիությունը և, հաշվի առնելով բացահայտված բոլոր հանգամանքերը (այդ թվում՝ վարույթի մասնակցի օգտին առկա փաստերը), կայացնել հիմնավորված վարչական ակտ, ինչը

¹⁹ ՎԴ/1147/05/19, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931070

²⁰ Տե՛ս, թիվ ՎԴ/0016/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը և ՎԴ/5539/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը

սակայն չի արել: Դատարանը հաստատված է համարել, որ վիճարկվող վարչական ակտերի ընդունմանն ուղղված վարչական վարույթների ընթացքում թույլ է տրվել «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված ընթացակարգային պահանջների խախտում, որոշումներն ընդունվել են առանց դրա հասցեատիրոջը հարուցված վարչական վարույթի մասին ծանուցելու: Ընթացակարգային պահանջների խախտումն էլ ազդել է վարչական ակտի իրավաչափության վրա:

Վարչական մարմինը որոշ դեպքերում սահմանափակվել է միայն վարչական վարույթի եզրափակիչ փուլով՝ հայտնելով, որ առկա է եղել հրատապ վարչական ակտ կայացնելու անհրաժեշտություն: Այնինչ, որոշման բովանդակային ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ բացակայել է հրատապ վարչական ակտ կայացնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև չի նշվել որևէ այլ իրավական հիմք, որը կնախատեսեր վարչական վարույթի սահմանափակում միայն եզրափակիչ փուլով: Բացի այդ, առկա չեն եղել նաև լսումներ չանցկացնելու բացառությունները: Այսինքն՝ բացակայել է վարույթը 3 օրից պակաս տևելու և միայն վարչական ակտի ընդունմամբ սահմանափակելու բացառությունը, ինչը նշանակում է, որ վարչական մարմինը պարտավոր էր լիարժեք վարույթ իրականացնել՝ երեք փուլերով:

Վարչական մարմնի կողմից մաքսային/հարկային ծառայողին աշխատանքից ազատման կարգը չպահպանելը

Մաքսային/հարկային ծառայողի հաստիքի չհիմնավորված կրճատմամբ աշխատանքից ազատում.

Մաքսային ծառայությունը մշտադիտարկված գրեթե բոլոր գործերով հաստիքների անհիմն կրճատմամբ աշխատանքից ազատել է մաքսային ծառայողներին:

Այսպես, օրենսդիրը հաստիքների կրճատման հիմքով մաքսային ծառայողին աշխատանքից ազատելը կապել է սահմանված կարգով իրականացված ատեստավորման արդյունքների հետ: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործատուի մոտ միայն արտադրության ծավալների, տնտեսական պայմանների, տեխնոլոգիական պայմանների, աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխումը, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությունն ինքնին բավարար չեն աշխատողի հետ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը գործատուի կողմից լուծելու համար, եթե նշված հանգամանքները չեն հանգեցրել աշխատողների թվաքանակի կրճատմանը²¹:

ՀՀ վճռաբեկ դատարանը, մեկ այլ որոշմամբ անդրադառնալով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման առանձնահատկություններին, փաստել է, որ գործատուն չի կարող աշխատողին առաջարկել ցանկացած աշխատանք, այլ պարտադիր պայման է համարվում, որ գործատուի մոտ առկա

²¹ Տե՛ս, Արտակ Մուրադյանը և մյուսներն ընդդեմ «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամի թիվ ԵԿԴ/3613/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը

հնարավորությունների սահմաններում առաջարկված աշխատանքը համապատասխանի աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին: Միայն աշխատողի կողմից մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան առաջարկված աշխատանքից հրաժարումը կարող է հանգեցնել գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի լուծմանը²²:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մաքսային մարմնի լուծարում տեղի չի ունեցել, Դատարանը ելել է այն կանխավարկածից, որ հայցվորները աշխատանքից ազատվել են «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված հաստիքների կրճատման հիմքով: Նշված փաստը չի հերքել նաև Պատասխանողի ներկայացուցիչը: Դատարանն արձանագրել է, որ վարչական գործերում առկա չի եղել ապացույց, համաձայն որի՝ Հայցվորներին առաջարկվել է նրանց մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ հայցվորներն էլ իրենց հերթին հրաժարվել են առաջարկված աշխատանքից:

Ավելին, գործերից մեկով²³ Դատարանը գտել է, որ հաստիքների կրճատումը կրել է ձևական բնույթ, քանզի 5 հաստիք ունեցող բաժնի գործունեությունը դադարեցվում է, ստեղծվում է նորը՝ ընդամենը 3 հաստիքով՝ այն պարագայում, երբ բաժնի գործառույթները ավելացել են, ապա մի քանի ամիս անց՝ Հայցվորին մաքսային ծառայությունից ազատելուց հետո, հաստիքները ավելանում են ևս 2-ով (առնվազն 17.04.2019թ. դրությամբ ավելացած հաստիքներն արդեն իսկ առկա էին՝ համաձայն Պատասխանողի կողմից ներկայացված փաստաթղթի), ընդ որում, ավելացած հաստիքներից մեկը ավագ մաքսային տեսուչի հաստիք է, որը ժամանակին զբաղեցնում էր Հայցվորը:

Վարչական մարմնի կողմից համատարած կերպով չի պահպանվել նաև այլ աշխատանք առաջարկելու կանոնը: Վարչական գործում առկա չի եղել ապացույց, համաձայն որի՝ Հայցվորին առաջարկվել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ Հայցվորն էլ իր հերթին հրաժարվել է առաջարկված աշխատանքից: Դատարանը, ուսումնասիրելով Հայցվորի պաշտոնի նկարագիրը և ՀՀ ՊԵԿ անվտանգության վարչության գորահավաքային նախապատրաստության, քաղաքացիական պաշտպանության և հատուկ պատրաստության կազմակերպման բաժնի ավագ մաքսային տեսուչի պաշտոնի հաստատված նկարագիրը արձանագրել է, որ այդ պաշտոններին ներկայացվող հիմնական պահանջները գրեթե նույնական են: Համեմատելով Հայցվորի կողմից զբաղեցրած պաշտոնի նկարագրով սահմանված պահանջները վարչական գործում առկա մի շարք այլ պաշտոնների նկարագրերի

²² Տե՛ս, Գայանե Դանիլովան ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱՔԴ/2378/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը

²³ ՎԴ/1565/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931494

հետ՝ Դատարանը հանգել է այն հետևության, որ Հայցվորը համապատասխանել է այլ պաշտոնների և անգամ վերջինիս պաշտոնը կրճատված լինելու պարագայում, հնարավոր էր նրան առաջարկել այլ՝ անգամ ավելի ցածր պաշտոն:

2018 թվականի նոյեմբերի 20-ից 2019 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում ՊԵԿ-ում առկա են եղել բազմաթիվ թափուր հաստիքներ: Այնինչ, Պատասխանողը հայտնել է երկու իրարամերժ դիրքորոշումներ՝ ա) Հայցվորի մասնագիտությանը և որակավորմանը համապատասխան աշխատանք առկա չի եղել, բ) Հայցվորը չի համապատասխանել իր զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու և չի ունեցել համապատասխան որակավորում և ունակություններ այլ պաշտոնների համար: Այսպիսով՝ Հայցվորին չի առաջարկվել նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ պաշտոն, չի ապացուցվել ՊԵԿ-ում Հայցվորի մասնագիտությանը և որակներին համապատասխան պաշտոն չունենալու փաստը, համապատասխան ատեստավորում անցած չլինելու պայմաններում չի հիմնավորվել Հայցվորի՝ իր զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու և այլ պաշտոնների համար համապատասխան որակավորումներ և ունակություններ չունենալու հանգամանքը:

Դատարանն արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծելու համար անհրաժեշտ է մի շարք նախապայմանների միաժամանակյա առկայությունը: Սույն գործի պարագայում, ի թիվս այլնի՝ պետք է առկա լինի ՊԵԿ-ի հաստիքացուցակով նախատեսված հաստիքների կրճատման իրադրություն: Ընդ որում, գործատուն պարտավոր է առնվազն երկու ամիս առաջ ծանուցել աշխատողին այդ մասին: Գործերից մեկով դատարանն արձանագրել է նաև, որ ուղարկված ծանուցումները նշում պետք է պարունակեն նաև այլ աշխատանք առաջարկելու հնարավորության բացակայության մասին: Հանրային ծառայության դեպքում այն իրավական առումով արդեն իսկ պետք է հստակ ձևակերպված լինի, դրա մասին պետք է առկա լինի իրավասու պաշտոնատար անձի համապատասխան իրավական ակտը՝ հաստիքներ կրճատման վերաբերյալ, որից հետո, միայն, կարող է սկսվել հարկային ծառայողին ծառայությունից ազատելու վերաբերյալ գործընթացը: Հակառակ պարագայում, ստացվում է, որ գործատուն դեռևս չունենալով աշխատողին աշխատանքից ազատելու օրենքով նախատեսված անհրաժեշտ հիմք՝ նախաձեռնում է վերջինիս աշխատանքից ազատելու գործընթաց, ինչը հակասում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կարգավորմանը: Աշխատանքից ազատման մասին ծանուցման մեջ պետք է նշվի աշխատանքից ազատելու տարին, ամիսը, ամսաթիվը, ինչը նշանակում է, որ ծանուցումն ուղարկելու պահին գործատուի համար պետք է հստակ որոշակի լինի այն օրը, երբ համապատասխան հաստիքը պետք է կրճատվի, իսկ աշխատանքային պայմանագիրը՝ լուծվի, ինչն անհնար է այն պարագայում, երբ դեռևս առկա չեն հաստիքների կրճատման վերաբերյալ համապատասխան իրավական ձևակերպումներ, իսկ հաստիքների կրճատումը դեռևս մտադրություն է, այլ ոչ թե իրողություն:

Այսպիսով, վարչական մարմինը չի կարող հենց այնպես կրճատել ծառայության հաստիքները՝ առանց հիմնավորելու դրա անհրաժեշտությունը: Դա ուղղակիորեն խախտում է նաև աշխատանքային իրավահարաբերություններին բնորոշ կայունության և որոշակիության սկզբունքները: Ընդ որում, գրեթե բոլոր գործերով արձանագրվել է, որ հաստիքները կրճատվել են և որոշ ժամանակ անց դրանք կրկին ավելացվել, ինչն առնվազն կասկած է հարուցում, որ նպատակը եղել է ծառայության աշխատակիցների հետ աշխատանքային իրավահարաբերությունների դադարեցումը: Բացի այդ, ՀՀ աշխատանքային օրենսգրքով ևս նախատեսված է, որ հաստիքների կրճատումը պետք է պայմանավորված լինի արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ: Նշված կանոնը տարածվում է ոչ միայն մասնավոր, այլև հանրային իրավահարաբերությունների վրա: Հանրային իրավահարաբերությունների դեպքում առավել դժվար է հանդիպել իրավիճակի, երբ պետական մարմնի արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանները կարող են փոփոխվել՝ առանց դրա որոշակի գործառույթների փոփոխման կամ բաժինների, ստորաբաժանումների լուծարման:

Սույն խնդրով բոլոր հայցերը բավարարվել են, Դատարանը միօրինակ կերպով արձանագրել է «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի պահանջների խախտում՝ սխալ կիրառում և սխալ մեկնաբանում:

Անհիմն հարկային պարտավորությունների առաջադրում

Մի քանի գործերով արձանագրվել է նաև վարչական մարմնի կողմից տարբեր տեսակի հարկերի՝ շահութահարկ, ավելացված արժեքի հարկ (այսուհետ՝ ԱԱՀ), եկամտահարկ, անհիմն առաջադրում, ինչպես նաև հաշվի չի առնվել նվազեցվող եկամուտների առանձնահատկությունները: Դա հիմնականում կապված է եղել ՀՀ հարկային օրենսգրքի իրավադրոյթների սխալ մեկնաբանման կամ կիրառման հետ:

Այսպես, գործերից մեկով²⁴ վարչական մարմինը սխալ է կիրառել մի շարք նորմերի բացատրությունները, մասնավորապես ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետը (հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում՝ գյուղատնտեսական արտադրանք արտադրող ֆիզիկական անձանց՝ գյուղատնտեսական արտադրանքի մատակարարումից ստացվող եկամուտները), ՀՀ հարկային օրենսգրքի 148-րդ հոդվածը (հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում նաև գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված ֆիզիկական անձանց՝ Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտները), ՀՀ հարկային օրենսգրքի 126-րդ հոդվածի

²⁴ ՎԴ/1456/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931324

1-ին մասի 1-ին կետի «ժ» ենթակետ (գյուղատնտեսական արտադրանք են համարվում հարկ վճարողի կողմից իրականացված գործողությունների արդյունքում կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող, մասնավորապես՝ անասնաբուծության արտադրանքը):

Տվյալ դեպքում, ըստ պատասխանողի դիրքորոշման, կենդանի կենդանիների իրացումից ստացված եկամուտներն են համարվում գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամուտներ: Մինչդեռ, վերը նշված իրավանորմերի վերլուծության արդյունքում դատարանն արձանագրում է, որ գյուղատնտեսական արտադրանքը դա կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող, մասնավորապես՝ անասնաբուծության արտադրանքն է, որի իրացումից ստացվող եկամուտը հարկման բազան որոշելիս ենթակա է նվազեցման: Սույն դեպքում կենդանիների կենսաբանական վերափոխման (մորթի) միջոցով սպառման համար ստացված միսը, դատարանի գնահատմամբ, գյուղատնտեսական արտադրանք է, և դրա դիմաց վճարվող եկամուտը նվազեցվող եկամուտ է, ուստի ենթակա չէ հարկման:

Մի քանի գործերով հարկային մարմինն անհիմն ԱԱՀ պարտավորություններ է նախատեսել անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի համար, որը չի իրականացրել ձեռնարկատիրական գործունեության նպատակով ներմուծում:

Մասնավորապես, անձի կողմից ՀՀ ներմուծված ավտոմեքենայի ներմուծումը «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի իմաստով չի համարվել ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծում, ինչից հետևել է, որ հայցվորը չի իրականացրել ԱԱՀ-ով հարկվող գործարք և չի կրել ԱԱՀ-ի վճարման պարտավորություն, քանի որ այդ ժամանակ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրի նորմերը գերակայել են իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի նորմերի նկատմամբ այնքանով, որ միջազգային պայմանագրով սահմանված է այլ նորմ, այն է՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրի 72-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետի ուժով անուղղակի հարկեր չեն գանձվում, երբ անդամ պետության տարածք են ներմուծվում ապրանքներ, որոնք ֆիզիկական անձանց կողմից ներմուծվում են անդամ պետության տարածք ոչ ձեռնարկատիրական գործունեության նպատակով²⁵:

Գործերից մեկով²⁶ հաշվի չի առնվել վարչական մարմնի կողմից սնանկության վարույթի առանձնահատկությունները և եկամտային հարկի վճարման պարտավորություն է առաջադրվել անձին սնանկության վարույթի շրջանակներում սնանկության կառավարչի կողմից հրապարակային սակարկություններով իրեն պատկանող գույքի օտարման համար: Սակայն ակհայտ է, որ պարտապան անձի գույքի կառավարումը սնանկության վարույթում

²⁵ ՎԴ/3272/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933433

²⁶ ՎԴ5/0186/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941075

իրականացնում է սնանկության կառավարիչը, և պարտապանի կողմից եկամուտ ստացված չլինելու պայմաններում հարկային մարմինը իրավասու չէ եկամտային հարկի գծով անձին հարկային պարտավորություն առաջադրել:

Այսպես, եկամտային հարկի առաջացման հիմքն օրենքով սահմանված գործունեության արդյունքում ստացված եկամուտն է: Միաժամանակ, սնանկության վարույթում գրավատու ֆիզիկական անձի սեփականությունը հանդիսացող գույքն ընդգրկվում է պարտապանի գույքի կազմում, ինչպես պարտապանին պատկանող ցանկացած գույք, իրավունք կամ այլ ակտիվ: Պարտապանի գույքի վաճառքն իրականացնում է կառավարիչը իր կողմից գույքագրման արդյունքներով ներկայացված և պարտատերերի, ընդ որում, սնանկության վարույթի շրջանակներում պարտապանի գործունեության կասեցման պահից սնանկության կառավարիչը կրում է սնանկության վարույթի ընթացքում հարկերի և (կամ) վճարների գծով լրացուցիչ առաջացած պարտավորությունների վերաբերյալ հարկային մարմնի սահմանած ձևով տեղեկատվության ներկայացման պարտականություն: Վերլուծելով վերը նշվածը՝ Դատարանն արձանագրել է, որ Հայցվորը չի կարող սնանկության վարույթի շրջանակներում սնանկության կառավարչի կողմից հրապարակային սակարկություններով իրեն պատկանող գույքի օտարման համար կրել եկամտային հարկի վճարման պարտականություն, քանի որ վերջինս նշված անշարժ գույքի օտարման արդյունքում որևէ եկամուտ չի ստացել, ըստ այդմ՝ հարկային մարմինը իրավասու չէ եկամտային հարկի գծով Հայցվորին հարկային պարտավորություն առաջադրել:

Գործերից մեկով²⁷ հարկային պարտավորություն է առաջադրված եղել իրավաբանական անձի մասնաճյուղին, այնինչ, վարչական ակտի հասցեատերը ունենալով մասնաճյուղի կարգավիճակ, չի հանդիսանում իրավաբանական անձ և ըստ այդմ նաև՝ չի հանդիսանում իրավունքի ինքնուրույն սուբյեկտ: Հետևաբար, տվյալ սուբյեկտին չէր կարող առաջադրվել պարտավորություններ: Օրենսդրությամբ կարգավորված է մասնաճյուղի իրավական կարգավիճակը, մասնավորապես՝ այն իրենից ներկայացնում է որոշակի գործառույթներ իրականացնող, իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված առանձնացված ստորաբաժանում: Ընդ որում, օրենսդրությամբ ուղղակիորեն ամրագրվել է, որ մասնաճյուղերն իրավաբանական անձինք չեն, այսինքն՝ վերջիններս չեն հանդիսանում իրավունքի առանձին սուբյեկտներ, չեն կարող ունենալ առանձնացված գույք և ինքնուրույն կրել պարտականություններ:

Վարչական մարմինն անհիմն կերպով հարկային պարտավորություն է առաջադրել՝ հաշվի չառնելով օտարվող գույքի նպատակային, գործառնական նշանակությունները: Անձի համար եկամտային հարկի հաշվարկման և վճարման պարտավորություն առաջանում է, երբ վերջինիս կողմից օտարվում է սեփականության իրավունքով իրեն պատկանող ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքը: ՀՀ հարկային օրենսգրքի

²⁷ ՎԴ/0473/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930303

147-րդ հոդվածի 16-րդ կետի «բ» ենթակետի վերլուծության արդյունքում Դատարանն արձանագրել է, որ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում բացառապես արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական, հողերի օտարումը: Բացի այդ, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հասարակական կառուցապատման հողեր են համարվում բնակչության սոցիալական սպասարկման, վարչական ու հասարակական կազմակերպությունների և այլ հասարակական նշանակության շենքերի հողամասերը: Տվյալ դեպքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով հաստատվել է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, իսկ նոտարական կարգով վավերացված՝ «Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի» համաձայն՝ գնորդին վաճառել է բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը: Ուստի հաստատվել է, որ ձեռք բերված հողամասը հանդիսանում է ըստ նպատակային նշանակության բնակավայրերի հողեր, ուստի Հայցվորի համար իրավահարաբերության ծագման պահին չի առաջացել եկամտային հարկի վճարման պարտավորություն²⁸:

Ստացվում է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «բ» ենթակետը մեկնաբանվել է ոչ ճիշտ: Հողերի ըստ գործառնական նշանակության հասարակական կառուցապատման լինելը չի կարող հանգեցնել ըստ նպատակային նշանակության բնակավայրերի հողերը հասարակական նշանակության գույք համարելուն, այն հանգամանքի հաշվառմամբ, որ հողերի հասարակական կառուցապատման լինելը ոչ թե հանգեցնում է տվյալ հողամասի ըստ նպատակային նշանակության փոփոխության, այլ վերաբերում է տվյալ հողամասի վրա կառուցված կամ հետագայում կառուցվող շենքին, այսինքն՝ տվյալ շենքի հասարակական նշանակության լինելուն: Ինչը որևէ պարագայում չի կարող հանգեցնել հողամասի նպատակային նշանակության փոփոխման և այն որպես հասարակական նշանակության գույք համարելուն: Սույն հոդվածի «բ» ենթակետով ուղղակիորեն չի սահմանվում, թե խոսքը վերաբերում է հողերի գործառնական, թե նպատակային նշանակությանը, որպիսի իրավակարգավորումը կարող է առաջացնել երկիմաստություն, ուստի Հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորմամբ, եթե հարկային հարաբերությունները կարգավորող՝ հավասարիքավական ուժ ունեցող իրավական ակտերի դրույթները պարունակում են հակասություններ, երկիմաստություններ կամ տարընթերցումներ, ապա դրանք մեկնաբանվում և կիրառվում են հարկ վճարողի օգտին:

Վարչական մարմնի կողմից վարչական վարույթում առկա ապացույցները բազմակողմանի չուսումնասիրելու արդյունքում տնտեսվարող սուբյեկտին վերագրվել է որպես արտոնագրային հարկ վճարող: Ընդհանուր կանոնի համաձայն՝ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ է համարվում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը: Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը, սակայն, արտոնագրային հարկով հարկման օբյեկտ չի համարվում, եթե այդ գործունեության իրականացման տվյալ

²⁸ ՎԴ/8310/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938690

վայրի (հանրային սննդի օբյեկտի) սպասարկման սրահի (սրահների) մակերեսը գերազանցում է 600 մ2-ը: Ըստ այդմ՝ եթե տնտեսվարողը հանրային սննդի ոլորտում գործունեությունը կազմակերպում է սպասարկման սրահում, որի մակերեսը չի գերազանցում 600 մ2-ը, տվյալ տնտեսվարողը համարվում է արտոնագրային հարկ վճարող: Այսինքն՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարողի՝ արտոնագրային հարկ վճարող հանդիսանալու/չհանդիսանալու հանգամանքը պայմանավորված էր այդ գործունեության իրականացման վայրի սպասարկման սրահի/ների մակերեսի չափով: Վարչական մարմնի կողմից ստուգումը չի ծառայել իր նպատակին, այն է՝ ճշտել ելակետային տվյալները: Այնպիսի պայմաններում, երբ ստուգման վարույթի շրջանակներում ձեռք բերված ապացույցները գնահատելու փոխարեն, ելակետային տվյալը որոշելու համար հիմք է ընդունվել մինչև ստուգումը ձեռք բերված տեղեկությունը, նշանակում է ստուգումը կրել է ձևական բնույթ և նախաձեռնվել է մինչ այդ կազմված տեղեկանքով ստացված տեղեկության հիման վրա ընկերությանը լրացուցիչ հարկային պարտավորություններ առաջադրելու նպատակով:

Ավելին, ստուգման վարույթում խախտվել է նաև վարչարարության մեկ այլ սկզբունք՝ հավաստիության կանխավարկածի սկզբունքը, այնինչ վարչական մարմինը պարտավոր է վստահել անձի հայտնած տեղեկություններին՝ միաժամանակ խնայելով նաև վարչական ռեսուրսները: Տվյալ դեպքում ստուգման վարույթի շրջանակներում հայցվոր ընկերության տնօրենը տեղեկանքներով տեղեկություն է տրամադրել ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց՝ սպասարահի/ների մակերեսի չափի վերաբերյալ: Այդ տվյալների իսկության վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք պարտավոր էին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար: Մինչդեռ, տվյալ դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից դրանց իսկությունը պարզելու ուղղությամբ որևէ քայլ չի ձեռնարկվել և միաժամանակ անտեսվել է նշված տեղեկանքներով տրված տեղեկությունը²⁹:

Առաջադրված հարկային պարտավորությունների (շահութահարկի, ԱԱՀ-ի) հաշվարկային սխալներ.

ՊԵԿ-ի կողմից կազմված վարչական ակտով Հայցվորի մոտ արձանագրվել էին շահութահարկի և ԱԱՀ մասով խախտումներ, և ընկերությանն առաջադրվել են լրացուցիչ պարտավորություններ, ինչը Դատարանը կիրառելի իրավադրույթների համակարգային վերլուծությամբ անհիմն է համարել: Վարչական մարմնի կողմից չեն պահպանվել իրավահարաբերության պահին գործած՝ «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետով սահմանված և ՀՀ կառավարության առընթեր Հարկային պետական

²⁹ ՎԴ/2721/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932782

ծառայության պետի 12.02.2007թ. թիվ 4 պաշտոնական պարզաբանմամբ սահմանված հարկային հաշվառման առանձնահատկությունները³⁰:

Մասնավորապես, վարչական ակտին կցված հավելվածներում նշված բոլոր գործարքները Հայցվորի կողմից կնքվել են «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում իրականացված օտարման գործընթացում և դրանց վերաբերյալ հարկային մարմիններին ներկայացված հաշվետվություններում հիմք է ընդունվել իրավահարաբերության պահին գործող «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետով նշված արժեքը, ինչն ուղղակիորեն բխում է «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի 2-րդ պարբերության պահանջներից: Նշված խնդրին անդրադարձել էր նաև հարկային մարմնի ղեկավարը ՀՀ կառավարության առընթեր Հարկային պետական ծառայության պետի 12.02.2007թ. պաշտոնական պարզաբանմամբ, որով հարկային մարմինն արտահայտել էր իր հստակ դիրքորոշումն առ այն, որ այն դեպքերում, երբ կառուցապատված բազմաբնակարան շենքի բնակարաններից տրվում է սեփականատիրոջը բնակարան, որպես վերջինիս «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի (27 նոյեմբերի 2006 թվականի, 2,0-185-Ն) 11-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան համարժեք փոխհատուցում, ապա այդ դեպքերում շահութահարկը և ավելացված արժեքի հարկը հաշվարկվում է համարժեք փոխհատուցման արժեքից էլնելով:

Տվյալ դեպքում «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի 2-րդ պարբերությամբ ամրագրված նորմի կիրառման համար անհրաժեշտ փաստական հիմքը /փաստական հանգամանքների համակցությունը/ գերակա հանրային շահերով հասարակության և պետության կարիքների համար օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը բնակարանով կամ բնակելի տնով հատուցելու դեպքի առկայությունն է: Այլ կերպ՝ եթե առկա է գերակա հանրային շահերով հասարակության և պետության կարիքների համար օտարված սեփականության դիմաց սեփականատիրոջը՝ բնակարանով կամ բնակելի տնով հատուցելու դեպքը /փաստական հիմքը/, ապա կիրառելի է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի 2-րդ պարբերությամբ սահմանված՝ ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառությունը որոշելու կարգը: Այսինքն՝ եթե բնակարանների կամ բնակելի տների իրացման գործարքի բովանդակությունը հանգում է նրան, որ այդ գործարքի միջոցով օտարված սեփականության դիմաց սեփականատիրոջը տրվում է հատուցում, ապա այդ գործարքը ԱԱՀ-ով հարկելիս հարկվող շրջանառությունը որոշվում է ըստ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի 2-րդ պարբերությամբ սահմանված կարգի: Արձանագրելով, որ կողմերի միջև վեճը խնդրո առարկա նորմի կիրառման համար անհրաժեշտ սուբյեկտային կազմի շուրջ է, Դատարանը եզրահանգել է, որ հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ՝ 1.

³⁰ ՎԴ/4354/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934461

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի նորմի կարգավորման առարկան գերակա հանրային շահերով հասարակության և պետության կարիքների համար օտարված սեփականության սեփականատիրոջն ազատում է ֆինանսական պարտավորությունների բեռից՝ ֆինանսական պարտավորությունները վերապահելով սեփականությունը ձեռք բերողին: Այս նորմը, դատարանի գնահատմամբ, որևէ կերպ չի սահմանում այն սուբյեկտային կազմը, ում նկատմամբ կիրառելի է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի 2-րդ պարբերության նորմը: «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի նորմի կարգավորման առարկան միանգամայն այլ է, քան «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի 2-րդ պարբերության նորմի կիրառելիության սուբյեկտային կազմի սահմանումը: Ավելին, դատարանն արձանագրել է, որ ՀՀ օրենսդրությունը չի բովանդակում որևէ այլ նորմ, որը կսահմաներ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի 2-րդ պարբերության նորմի կիրառելիության սուբյեկտային կազմ:

Հայցվորը, չհանդիսանալով գերակա հանրային շահերով հասարակության և պետության կարիքների համար օտարված սեփականության ձեռք բերողը, որպես հատուցում տրված բնակարանների օտարման գործարքների կապակցությամբ իրավասու էր ԱԱՀ վճարել ըստ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի 2-րդ պարբերության, այն է՝ որպես հարկվող շրջանառություն դիտարկելով բնակարանների համարժեք փոխհատուցման չափը՝ օտարված գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը:

Հաշվապահական հաշվառումը սահմանված կարգով չվարելու կամ հաշվապահական հաշվառման տվյալները ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց չներկայացնելու հիմքով հարուցված վարչական վարույթներով տնտեսվարող սուբյեկտներին անհիմն կերպով առաջադրվել էին նաև ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով պարտավորություններ, ինչպես նաև տուգանք են առաջադրվել շահութահարկի հաշվարկների սխալներ ներկայացնելու համար:

Նշված խնդրով բոլոր հայցերը բավարարվել են Դատարանի որդեգրած միատեսակ դիրքորոշմամբ և միևնույն փաստակներով: Ընդ որում, բոլոր գործերով տնտեսվարող սուբյեկտները իրականացնում էին գազի իրացման հետ կապված միևնույն գործունեությունը, իսկ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով պարտավորությունները առաջադրվել են իրացված գազի տվյալների թերհայտարարագրման հետևանքով³¹:

Տվյալ հիմքով հարուցված վարչական վարույթներում արձանագրվել են մի քանի խնդիրներ՝ իրավահարաբերության պահին ուժը կորցրած օրենքի՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի կիրառում, այնինչ, կիրառման ենթակա է եղել ոչ թե տվյալ օրենքը, այլ ՀՀ հարկային օրենսգիրքը:

³¹ Տե՛ս, օրինակ, ՎԴ/1908/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931868

Հաջորդ խնդիրն այն էր, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից գազի իրացման որևէ տվյալի թերհայտարարագրումը եղել է ենթադրություն՝ գուրկ օբյեկտիվ հիմնավորումներից: Պատասխանող վարչական մարմինը հիմք է ընդունել իրացված գազի և էլեկտրաէներգիայի համամասնության կանխավարկածը՝ չբացատրելով այլ օբյեկտիվ գործոնների ազդեցությունը, չներկայացնելով որևէ հիմնավորում առ այն, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից իրացված գազի ծավալը պետք է համամասնություն ունենա ծախսված էլեկտրաէներգիայի հետ, չի փաստարկել, որ տնտեսվարողի կողմից էլեկտրաէներգիայի ծախսումը ուղղված է եղել բացառապես գազի իրացմանը: Վարչական մարմինը տվյալ տեսակի բոլոր գործերով պատշաճ կերպով չի ապացուցել Հայցվորի կողմից իրացված գազի ծավալների թերհայտարարագրման փաստը: Բացառապես այն հանգամանքը, որ տնտեսվարողի սուբյեկտի մոտ իրականացվում են ստուգումներ, դեռևս հիմք չէ ենթադրելու, որ տնտեսվարողը այդ ժամանակահատվածում հայտարարագրել է բոլոր տվյալները՝ ի հեճուկս նախկինում թերհայտարարագրված տվյալների կամ տնտեսվարող սուբյեկտի մոտ տարբեր ժամանակահատվածներում տարբեր տվյալների հայտարարագրումը դեռևս հիմք չէ ենթադրելու, որ մի դեպքում հայտարարագրվել են ամբողջական տվյալները, մի դեպքում՝ թերհայտարարագրվել:

Հատկանշականն այն է, որ հայցերի բավարարումներից հետո վարչական մարմինը շարունակել է կիրառել ուժը կործրած օրենքի դրույթներ և առաջնորդվել է նույն գործելաոճով՝ ենթադրությունների հիման վրա արձանագրելով ենթադրյալ խախտումներ: Ժամանակագրական առումով օրինակ թիվ ՎԴ2/0087/05/19 գործով վճիռը կայացվել է 25.11.2019 թվականին, իսկ թիվ ՎԴ2/0103/05/19 գործով վճիռը կայացվել է 05.03.2020 թվականին: Անհասկանալի է վարչական մարմնի կողմից նման գործելաոճի շարունակումը, քանի որ տվյալ դեպքում խնդիրը ոչ թե վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավադրույթների տարբերակումն է կամ որևէ այլ վիճելի խնդիր, այլ ակնհայտ է, որ վարչական մարմնի կողմից իսկապես կիրառվել են օրենքի ուժը կորցրած դրույթներ, իսկ հիմնավորումները ոչ թե կոնկրետ ապացույցներով են հաստատվել կամ հերքվել այլ պարզապես օբյեկտիվ ենթադրություններով ինչն առնվազն անթույլատրելի է:

Վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղքի բացակայություն.

Ապրանքների սխալ հայտարարագրման հիմքով հարուցված վարչական վարույթներով արձանագրվել են խնդիրներ՝ մեղքի բացակայությամբ անձին վարչական տուգանք նշանակելու վերաբերյալ:

ՎԻՎ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյոք վարչական իրավախախտում, արդյոք, տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ, արդյոք, նա ենթակա է վարչական պատասխանատվության, կան արդյոք, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ, պատճառվել է արդյոք, գույքային վնաս, հիմքեր կան արդյոք վարչական իրավախախտման վերաբերյալ նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային

ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության, աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու համար, ինչպես նաև պարզել գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Մաքսային իրավահարաբերությունները կարգավորող իրավակարգի համաձայն՝ հայտարարատուն ունի պարտականություններ ապրանքների հայտարարգրման դեպքում, իսկ պարտականությունները չկատարելու, մաքսային հայտարարագրում ոչ հավաստի տեղեկություններ հայտարարագրելու համար նախատեսվում է պատասխանատվություն: Գործերից մեկով կարևորվել է այն հանգամանքը, որ Հայցվորն ինքն է Պատասխանողին հայտնել հայտարարագրերում սխալի առկայության և դրանում փոփոխություն կատարելու անհրաժեշտության մասին, իսկ նման դեպքերի կարգավորումները տրված են «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի 191-րդ հոդվածով, որին առհասարակ Պատասխանող կողմը չի անդրադարձել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներն իրականացնելիս³²:

Մշտադիտարկված գործերից մեկով³³ Դատարանը հայցը բավարարել է, քանի որ գտել է, որ ՀՀ ՊԵԿ-ի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը քննարկվող դեպքում արձանագրել է, որ նախնական զննման և մաքսային արժեքի որոշման ժամանակ արդեն մաքսային մարմինը պարտավոր էր հայտնաբերել ապրանքների՝ սխալ ծածկագրերով հայտարարագրելու փաստը: Նման պայմաններում Դատարանը գտել է, որ ՊԵԿ-ի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի կողմից մաքսային մարմնի կողմից իր վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու փաստի արձանագրումը սույն գործով քննարկվող դեպքերի առումով հանգեցնում է հետևյալին՝ ապրանքների նախնական զննման, ինչպես նաև մաքսային ձևակերպման համար մաքսային արժեքների հաշվարկման պահուստային մեթոդի ընտրման պայմաններում բացակայում է Հայցվորի մեղքը՝ ապրանքները սխալ ծածկագրերով հայտարարագրելու արարքում, քանի որ մաքսային մարմինը կարող էր և պարտավոր էր հենց նախնական զննման, իսկ հետագայում նաև՝ մաքսային արժեքի որոշման ժամանակ հայտնաբերել սխալ ծածկագրերով հայտարարագրելու փաստը:

Ստացվում է, որ մաքսային կանոնների խախտման համար անձը կարող է պատասխանատվության ենթարկվել միայն մեղքի առկայության դեպքում: Հայտարարատուն կամ վերջինիս անունից ձևակերպումն իրականացրած մաքսային ձևակերպումների մասնագետը, իրավունք ունեն վստահելու, որ իրենց կողմից ճիշտ են ընտրված ներմուծված ապրանքների ծածկագրերը, որպիսի հանգամանքն արդեն իսկ բացառում է նմանատիպ գործերով պատասխանատվության ենթարկված անձի մեղքի առկայությունը:

³² ՎԴ/6202/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936511

³³ ՎԴ/2278/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932269

Այս առումով հատկանշական է ՀՀ ՄԴ 12.10.2010թ. թիվ ՄԴՈ-920 որոշմամբ արտահայտած դիրքորոշումը, ըստ որի՝ «մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր, հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը: Նշված սկզբունքը սերտորեն առնչվում է նաև վարչական պատասխանատվության մեկ այլ սկզբունքի՝ անձնական պատասխանատվության սկզբունքին, որի համաձայն անձը ենթակա է պատասխանատվության միայն անձամբ կատարած իրավախախտման համար:

Ելնելով վերոհիշյալից՝ ՀՀ ՄԴ-ն գտել է, որ վիճարկվող նորմը կիրառելիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավակիրառողը պարտավոր է, ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, պարզել լիազորված անձի, լիազորողի և տեղափոխողի մեղքի առկայությունը՝ ըստ այդմ որոշելով պատասխանատու սուբյեկտին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լիազորված անձը գործում է տեղափոխողի անունից և ի շահ վերջինիս՝ համապատասխան ակտի հիման վրա տրամադրված լիազորությունների շրջանակներում, և հայտարարագրումն իրականացնում է տեղափոխողի տրամադրած տեղեկատվության հիման վրա՝ այդ լիազորությունների շրջանակներում կատարած ցանկացած գործողության համար վիճարկվող դրույթով սահմանված պատասխանատվության սուբյեկտ պետք է հանդիսանա տեղափոխողը:

ՀՀ ՄԴ-ն արձանագրել է, որ ձևավորված իրավակիրառական այն պրակտիկան, երբ չապահովելով իրավախախտման համար մեղավորի պատասխանատվությունը և բոլոր դեպքերում որպես պատասխանատվության սուբյեկտ դիտարկելով տեղափոխվող ապրանքների կամ տրանսպորտային միջոցի նկատմամբ որևէ գույքային իրավունք չունեցող լիազորված անձին, թույլ չի տալիս արդյունավետորեն իրացնել վիճարկվող նորմով սահմանված պատասխանատվության իրավաչափ նպատակը, այն է՝ ապահովել տնտեսավարող սուբյեկտի կողմից՝ Սահմանադրության 45-րդ հոդվածով ամրագրված պարտականության իրական կատարումը»:

Գործերից մեկով³⁴ Դատարանը, վկայակոչելով Եվրասիական տնտեսական միության Մաքսային օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի նորմերը, գտել է, որ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը մաքսային արժեքների հաշվարկման պահուստային մեթոդով որոշում է մաքսային մարմինը, որը պարտավոր է հայտարարատուին տեղեկացնել իր տրամադրության տակ առկա տվյալների աղբյուրների, դրանց հիման վրա կատարված հաշվարկների մասին: Դատարանի գնահատմամբ՝ մաքսային հայտարարագրով ներմուծված «ոռոգման համակարգի պոլիմերային խողովակներ կաթոցիկներով համալրված» ապրանքների նախնական գնման, ինչպես նաև մաքսային ձևակերպման համար մաքսային մաքսային արժեքների հաշվարկման պահուստային մեթոդի ընտրման պայմաններում մաքսային մարմինը կարող էր և պարտավոր էր արձանագրել ապրանքների սխալ

³⁴ ՎԴ/2278/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932269

ծածկագրերով հայտարարագրելու հետ կապված անճշտությունները, որպիսի փաստ, սակայն, գործում առկա չի եղել:

Ուժը կորցրած օրենքի դրույթների կիրառում.

Ինչպես արդեն նշեցինք, մի շարք գործերով վարչական մարմինը կիրառել է իրավահարաբերության ծագման պահին ուժը կորցրած «Հարկերի մասին» 22-րդ հոդվածը: Վարչական մարմինը հարկային պարտավորությունները հաշվարկել է՝ հիմք ընդունելով ուժը կորցրած վերոնշյալ հոդվածը: Չնայած այն հանգամանքին, որ տվյալ գործերով վարչական ակտերը դատարանի կողմից ճանաչվել են անվավեր, այդուհանդերձ, վարչական մարմինը շարունակել է նման արատավոր պրակտիկան և կարելի է ասել, մինչ օրս էլ կիրառում է վերոնշյալ ուժը կորցրած իրավադրույթը:

Ապրանքների սխալ հայտարարագրման հիմքով հարուցված վարչական վարույթներից մեկով ևս վարչական մարմնի կողմից կիրառվել է ուժ չունեցող դրույթ: Մասնավորապես, Սահմանադրական դատարանի 3-ը հունիսի 2014 թ. ՍԴՈ-1153 որոշմամբ Մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի «անկախ սեփականության պատկանելությունից» դրույթը ճանաչվել է Սահմանադրության 8 և 31-րդ հոդվածների հակասող և անվավեր: Վիճարկվող ակտերով վկայակոչվել է Եվրասիական տնտեսակն միության Մաքսային օրենսգրքի 56-րդ հոդվածի 2-րդ մասը, որը առնչություն չունի տեղափոխվող ապրանքները վերադարձնելու հարցի հետ (կարգավորում է ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում մաքսատուրքերը և հարկերը վճարելու պարտավորությունները): Նման պայմաններում Դատարանը գտել է, որ հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման³⁵:

Հայեցողական լիազորության ոչ պատշաճ իրականացնելը.

Դիտարկված գործերից բոլորով պատասխանատվության ենթարկելիս վարչական մարմնի համար հայեցողական լիազորություն նախատեսված չի եղել, քանի որ տուգանքի չափերը հստակ նախատեսված են եղել պատասխանատվություն սահմանող նորմերով, իսկ հարկային պարտավորությունները, դրանց ուշացման արդյունքում հաշվարկված տոկոսների դրույքաչափերը ևս հստակ ամրագրված են եղել կիրառելի իրավանորմերով: Համենայն դեպս, Դատարանի կողմից նման խնդիր ևս չի արձանագրվել:

Միայն գործերից մեկով³⁶ Դատարանն արձանագրել է հայեցողական լիազորության ոչ պատշաճ իրացում՝ մրցույթի իրավաչափությունը վիճարկելու խնդրով: Դատարանը նկատել է, որ Կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի N 873-Ն որոշմամբ հաստատված

³⁵ ՎԴ/4399/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934561

³⁶ ՎԴ5/0062/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932027

հարկային և մաքսային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու (մրցույթին մասնակցելու) կարգի 82-րդ կետով սահմանված՝ հարցազրույցի ընթացքը տեսաձայնագրելու և առցանց ռեժիմով հեռարձակելու ու Կարգի 83-րդ կետով սահմանված՝ մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչների, ինչպես նաև՝ հրավիրված դիտորդների ներկայությունը ապահովելու Հանձնաժողովի լիազորությունները հայեցողական են: Սակայն դա չի նշանակում, որ Հանձնաժողովը կարող է առանց պատճառաբանության չիրացնել իր այդ հայեցողությունը: Հայեցողական լիազորությունը կաշկանդված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված նպատակներով, ինչպես նաև վերևում նշված սկզբունքների ապահովման անհրաժեշտությամբ: Մինչդեռ տվյալ դեպքում պատասխանողը չի ներկայացրել ո՛չ հարցազրույցի տեսագրությունը, ո՛չ էլ հարցազրույցի ընթացքի արձանագրությունը: Ընդ որում, պատասխանողի պնդմամբ հարցազրույցը տեսաձայնագրվել է, սակայն ձայնագրությունը չի պահպանվել: Սակայն պատասխանողը չի մատնանշել որևէ հիմնավոր պատճառ այն մասին, թե ընդամենը մեկ տարի (մի փոքր ավել) առաջ տեղի ունեցած տեսաձայնագրությունը ինչու չի պահպանվել: Պատասխանողը չի նշել նաև հարցազրույցի ընթացքի արձանագրության բացակայությունը հիմնավորող որևէ պատճառ:

Նվազ նշանակություն ունեցող իրավախախտման դեպքում վարչական տույժի կիրառում.

Գործերից մեկով³⁷ վարչական մարմինը վարչական տույժ է կիրառել նվազ նշանակություն ունեցող իրավախախտման դեպքում: Խնդիրը կայացել է նրանում, որ Հայցվորը ՊԵԿ որոշմամբ հետագա արտահանման պարտավորությամբ ներմուծված տրանսպորտային միջոցը սահմանված ժամկետում չարտահանելու համար ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի ուժով ենթարկվել է վարչական պատասխանատվության: Սակայն ուշացումը եղել է 14 օր և ներկայացվել է ողջամիտ պատճառ դրա համար՝ հարազատի ծանր հիվանդություն: Իհարկե, այս պատճառը չի բացառում սահմանված ժամկետում ֆիզիկապես իր պարտավորությունը կատարելու հայցվորի հնարավորությունը, սակայն ակնհայտ է, որ հարազատի ծանր հիվանդությունը կարող է անձին պատճառել հոգեբանական ծանր ապրումներ, որոնց ազդեցության ներքո վերջինս բավարար չափով չկարևորի իր որոշ պարտավորությունների պատշաճ կատարումը:

Ընդ որում, Հայցվորի բացթողումն անդառնալի չէ տվյալ դեպքում: Տրանսպորտային միջոցը 22.10.2019 թ. արտահանելու դեպքում (Հայցվորն այդ օրը դիմել է մաքսային մարմնին և հայտնել ուշացնելու պատճառները) որևէ ոտնձգություն տեղի չէր ունենա պետական կամ հասարակական կարգի, սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ (համենայն դեպս, մաքսային

³⁷ ՎԴ/1010/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930916

մարմինը չի ակնարկել որևէ խնդիր): Փոխարենը, վարչական մարմինը տուգանել է Հայցվորին, որի հետևանքով մինչ օրս տվյալ տրանսպորտային միջոցը անօրինական գտնվում է ՀՀ-ում, քանի որ մինչև տուգանքը չվճարվի, մաքսային մարմինը չի թույլատրում արտահանել այն (պատասխանող կողմն ընդունել է հայցվորի այս դիտարկումը):

Ստացվում է, որ հայցվորն աննշան խախտում է թույլ տվել, որի համար ՎԻՎ օրենսգրքով սահմանված նպատակների համար վարչական տույժ կիրառելու անհրաժեշտություն չկա՝ մի կողմից, վարչական տույժը չի լուծել խնդիրը (իսկ խնդիրը բացառապես այն է, որ տրանսպորտային միջոցը անօրինական գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում), ավելին՝ բարդացրել է դրա լուծումը:

Նման պայմաններում դատարանը հիմնավոր չի համարել ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածով սահմանված վարչական տույժի կիրառումը, քանի որ իրավախախտումն ունեցել է նվազ նշանակություն և վարչական տույժի կիրառումը չի ծառայել իր նպատակին:

Վարչական վարույթի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը չապահովելը

Մշտադիտարկված գործերից 87 գործով Դատարանը գտել է, որ վարչական մարմնի կողմից փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը չի ապահովվել: Տվյալ խախտումը հանգեցրել է նաև մյուս վարչարարության խնդիրների ստեղծմանը: Այն, որ վարչական մարմնի կողմից ստուգման ընթացքում որևէ կերպ չի պարզվել իրացված գազի ծավալների և ծախսված էլեկտրաէներգիայի չափերի վրա օբյեկտիվ գործոնների ազդեցության հնարավորությունը, հազնեցրել է ոչ իրավաչափորեն հարկային պարտավորության առաջադրման: Կարող ենք եզրահանգել, որ վարչական վարույթի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելը պատշաճ վարչարարության իրականացման առանցքային խնդիրներից է, քանի որ դրա խախտումը կարող է հանգեցնել բովանդակային մի շարք խախտումների, ապացույցների անբարարարության, փաստերի խեղաթյուրման և մի շարք այլ խնդիրների:

Դատարանը ևս գործերից մեկով³⁸ արձանագրել է, որ յուրաքանչյուր գործի խնդիրների վերհանումը և դրանց լուծումն իրականացվում են գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման միջոցով, որն իր մեջ ներառում է նաև ապացույցների բացահայտումը, հավաքագրումը և դրանց պատշաճ ձևակերպումը: Այսպիսով, օրենսդիրը միանշանակ պարտավորեցնում է վարչական մարմնին պարզել գործի փաստական հանգամանքները և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկել դրանք: Վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով պետք է պարզի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք, ըստ համապատասխան օրենքի, անհրաժեշտ են

³⁸ ՎԴ/7530/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937863

կոնկրետ վարչական ակտն ընդունելու համար: Վիճարկվող որոշումներից մեկում նշվել է, որ ստուգման ակտով պարզվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից ապրանքների հայտարարագրերով ՀՀ տարածք է ներմուծվել և հայտարարագրվել ադամաթուզ (բանան)՝ հաշիվ-ապրանքագրերի արժեքները 11.000 ԱՄՆ դոլար, 7.800 ԱՄՆ դոլար և 13.200 ԱՄՆ դոլար: Վրաստանի մաքսային մարմիններից ստացված գրությունների համաձայն տնտեսվարող սուբյեկտի կողմից ՀՀ տարածք ներմուծված և հայտարարագրված ադամաթուզի հաշիվ ապրանքագրերի արժեքների մասով առկա են անճշտություններ: Պատասխանողի կողմից ներկայացված վարչական վարույթի նյութերի, մասնավորապես՝ հաշիվ ապրանքագրերի և հայտարարագրերի հետազոտումից պարզվել է, որ միևնույն ապրանքների համար կազմվել են տարբեր գների վերաբերյալ փաստաթղթեր, այսինքն՝ վարչական մարմնի կողմից գնահատված ապացույցներում առկա են եղել տեղեկությունների անհամապատասխանություն:

Գործերից մեկով³⁹ Դատարանն արձանագրել է, որ հարկային մարմնից պահանջվում էր նշանակված համալիր ստուգման շրջանակներում ուսումնասիրության առարկա դարձնել տնտեսվարող սուբյեկտի կողմից վարվող հաշվապահական հաշվառումը, ֆինանսական հաշվետվությունները, հաշվեկշիռը, սկզբնական հաշվառման փաստաթղթերը, ծանոթանալ և հետազոտել քրեական գործում առկա նյութերը: Մինչդեռ, հարկային մարմնի կողմից որևէ նման գործողություն փաստացիորեն չի կատարվել, համալիր ստուգման ողջ գործընթացը սահմանփակվել է միայն ՀՀ հարկային օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափը որոշելով, ստուգումն իրականացնող անձինք չեն ծանոթացել քրեական գործի նյութերին, հիմք են ընդունել միայն քննիչի որոշման մեջ շարադրված փաստերը: Այնինչ, վարչական մարմնի կողմից ստուգում իրականացնելու նպատակը ոչ թե պետք է լինի անձին պատասխանատվության ենթարկելը, այլ օրենքի պահանջների խախտումները հայտնաբերելը:

Վարչական մարմինը ԱԱՀ գանձում է իրականացրել՝ առանց պատշաճ ուսումնասիրության ենթարկելու և բացահայտելու էական նշանակություն ունեցող փաստերը: Մասնավորապես, վարչական վարույթի նյութերում առկա է եղել միայն անձին պատկանած բնակարանի առուվաճառքի պայմանագիրը՝ նոտարական վավերացմամբ, սակայն առկա չի եղել որևէ ապացույց այդ գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման մասին, դրա ժամանակի մասին, որը տվյալ վարչական վարույթի համար ունեցել է էական նշանակություն: Մասնավորապես, միայն նշված փաստի ստուգմամբ վարչական մարմինը կարող էր հավաստիանալ ԱԱՀ-ով հարկվող գործարքի առկայության մասին, ինչպես նաև պետք է պարզվեր գործարքից ծագող իրավունքի պետական գրանցման ամսաթիվը, ըստ որի, հետագայում պետք է որոշվեր հարկային իրավախախտման ամսաթիվը և ըստ դրա՝ կատարվեր օրենքով սահմանված տույժերի հաշվարկը:

³⁹ ՎԴ/2325/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932336

Լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու կամ առանց արտոնագրի գործունեություն իրականացնելու հիմքով հարուցված վարչական վարույթով ևս արձանագրվել է փաստական հանգամանքների բազմակողմանի չպարզման խնդիր: Ընկերության կողմից արդյունահանված օգտակար հանածոն պարունակել է ինչպես ավազ, այնպես էլ խիճ, սակայն վարչական մարմինը որևէ միջոց չի ձեռնարկել ընկերության ունեցած բնական ավազի մնացորդում խճաքարի (խիճ) առկայությունը պարզելու ուղղությամբ և վարչական մարմինը բավարարվել է միայն ներկայացված հաշվետվությամբ ապրանքատեսակի անվանումը «բնական ավազ» նշված լինելու հանգամանքով և որևէ կերպ չի բացառել ապրանքային մնացորդում խիճի առկայությունը, մշակման արդյունքում այն առանձնացնելու և ավազից առանձին իրացնելու հնարավորությունը, ինչը հանգեցրել է անձին ոչ իրավաչափորեն տուգանքի ենթարկելուն⁴⁰:

Վարչական մարմնի կողմից նման խնդիրներ թույլ տալը, հավանական է, պայմանավորված է այն հանգամանքով, որ հաճախ փաստարկներ է հայտնել, որ վարչական վարույթի շրջանակներում Հայցվերը զրկված չի եղել ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից, ինչին ի պատասխան Դատարանն արձանագրել է, որ նշված հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ հայցը մերժելու համար, քանի որ ընդունվել է Հայցվորի համար միջամտող վարչական ակտ և գնահատվել են իրավաբանական անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքներ, որպիսի պայմաններում նշված հանգամանքների ապացուցման բեռը, «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի իմաստով, կրում է վարչական մարմինը⁴¹: Այնուամենայնիվ ՊԵԿ-ի կողմից շարունակվել է և մինչ օրս էլ շարունակվում է նման փաստարկի մեջբերումը:

Այլևս իրավաբանական ուժ չունեցող վարչական ակտով նախատեսված հարկային պարտավորությունների գանձում

Գործնականում վարչական մարմինը դատարանի կողմից անվավեր ճանաչված ակտի հիմքով կատարում է հարկային պարտավորությունների գանձումներ՝ պատճառաբանելով, որ դատարանը վարչական ակտն անվավեր է ճանաչել ընթացակարգային նորմերի խախտման, մասնավորապես լսումներ անցկացնելու վերաբերյալ ծանուցած չլինելու հիմքով, իսկ նյութական խնդիրներին դատարանը չի անդրադարձել:

Գործերից մեկով վարչական ակտի հասցեատերը վարչարարությամբ պատճառված վնասը հատուցելու պահանջով դիմում է դատարան՝ այլևս իրավաբանական ուժ չունեցող վարչական ակտով նախատեսված գումարները վերադարձնելու հիմքով, սակայն դատարանն

⁴⁰ ՎԴ2/0148/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934681

⁴¹

արձանագրել է, որ Հայցվորի կողմից պահանջվող գումարը ոչ թե վարչարարությամբ պատճառվ վնաս է, այլ հաշվարկված հարկային պարտավորություն:

Այս առումով ՀՀ վճռաբեկ դատարանը մի շարք նախադեպային որոշումներով անդրադառնալով ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման խնդրին, նշել է, որ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անհրաժեշտ է, որպեսզի առաջին հերթին ոչ իրավաչափ ճանաչված լինի անձին վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որից հետո միայն անձը պարտավոր է նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկել վերադասության կամ դատական կարգով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պետության պատասխանատվության պայմաններն են վնասի առկայությունը և դրա վրա հասնելը (պատճառվելը) ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով: Այսինքն՝ վարչական մարմինների պարտականությունների խախտման և վնասի պատճառման միջև պետք է առկա լինի իրավական նշանակություն ունեցող պատճառահետևանքային կապը: Այլ կերպ ասած՝ վարչարարությունն ոչ իրավաչափ ճանաչելը դեռևս չի նշանակում, որ անձը վնասը կրել է հենց վարչարարության հետևանքով, անհրաժեշտ է, որ վարչարարության և պատճառված վնասի միջև առկա լինի անմիջական պատճառահետևանքային կապ: Պատճառահետևանքային կապի հարցը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առանձին գնահատման առարկա պետք է դառնա, և դրա առկայությունը որոշելիս առանցքային պետք է համարվի այն գաղափարը, որ պատճառահետևանքային կապի առկայության մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, երբ վնասի առաջացումը ոչ իրավաչափ վարչարարության անխուսափելի և անմիջական արդյունքն է: Հետևաբար, ոչ իրավաչափ վարչարարության և առաջացած վնասների միջև պատճառահետևանքային կապ կարող է առկա լինել, եթե վնասի առաջացումը հանդիսանում է իրականացված վարչարարության օբյեկտիվորեն անհրաժեշտ և ուղղակի արդյունքը: Եթե բացասական հետևանքները կարող էին առաջանալ նաև առանց ոչ իրավաչափ վարչարարության (իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարության), ուրեմն դրանց միջև պատճառահետևանքային կապը բացակայում է:

Դատարանը վերոնշյալի հիմքով եզրակացրել է, որ հայցվորի կողմից վճարված 3.906.274 դրամ գումարը ոչ թե հարկային մարմնի կողմից իրականացրած վարչարարության հետևանքով պատճառված վնասի գումար է, այլ հայցվորի կողմից 2014թ-ի 4-րդ եռամսյակում իրականացրած գործարքների մասով իրավահարաբերության պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաշվարկված և նույն հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկով վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար: Նման պայմաններում դատարանը եզրակացրել է, որ «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ, 100-րդ, 111-րդ հոդվածները

սույն դեպքում կիրառելի չեն և 3.906.274 դրամ գումարը հատուցման կամ վերադարձման ենթակա չէ⁴²:

Դատարանը գումարը վերադարձնելը մերժել է վնասի առկայություն չլինելու հիմքով, սակայն չի բացառվում, որ անձը կարող էր ընտրել իրավունքի պաշտպանության այլ եղանակ և դատարանի կողմից պարտավորեցվեր պատասխանողին վերադարձնել անհիմն գանձված գումարները:

Կոմիտեի ներկայացուցիչների հետ հանդիպման շրջանակներում տվյալ խնդրի առնչությամբ վերջիններս հայտնել են, որ հարկային պարտավորությունը պարզապես չի կարող վերանալ, և Կոմիտեի դիրքորոշումն է այդուհանդերձ գանձել անվավեր ճանաչված վարչական ակտերով նախատեսված հարկային պարտավորությունները: Նշվել է նաև, որ ՀՀ վճռաբեկ դատարանի վարույթում է գտնվում կրկնակի վարչական վարույթի հետ կապված խնդրով բողոք:

Վարչական ակտում այն ընդունելուն ուղղված փաստական և իրավական հիմքերը ներառված և պատճառաբանված չլինելու հանգամանքը

Մշտադիտարկված գործերից 38-ով (18 %) արձանագրվել է, որ վարչական մարմինը վարչական ակտում չի ներառել և պատճառաբանել այն ընդունելուն ուղղված փաստական և իրավական հիմքերը: Տարածված խախտումներից է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու հիմքով հարուցված վարչական վարույթներով ստուգման համար հիմք հանդիսացած հանձնարարագրում այլ իրավական հիմք նշված լինելը՝ ՀՀ հարկային օրենսգրքի 335-րդ հոդվածը, ինչը սահմանում է ՀԴՄ կիրառման ճշտության ստուգումը՝ որպես թեմատիկ հարկային ստուգումների տեսակ: Այսինքն՝ հանձնարարագրում չեն նշվել հսկիչ գնման կատարման իրավական հիմքերը:

Ծառայողական կարգապահական և վարքագծի (էթիկայի) կանոնները միանգամյա կոպիտ խախտելու կամ ծառայողական կարգապահական և վարքագծի (էթիկայի) կանոնները պարբերաբար խախտելու հիմքով հարուցված վարչական վարույթներից մեկով Պատասխանողի կողմից վիճարկվող ակտում չի արձանագրվել, այն ընդունելու համար հիմք հանդիսացող բոլոր էական փաստական և իրավական հիմքերը, որպիսի պայմաններում վարչական մարմնի կողմից խախտվել է վերոշարադրյալ իրավակարգավորմամբ վարչական ակտի հիմնավորվածության ներկայացվող օրենսդրական իմպերատիվ պահանջը⁴³:

Միննույն փաստական հիմքերով կրկին վարչական վարույթի հարուցում, իրավական որոշակիության սկզբունքի խախտում

Դատարանը գործերից մեկով⁴⁴ հայցի բավարարման հիմքում դրել էր Պատասխանողի կողմից վարչական վարույթը հարուցելու և վարչական ակտը կայացնելու համար նախատեսված

⁴² ՎԴ/0680/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930526

⁴³ ՎԴ/1865/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931821

⁴⁴ ՎԴ/1215/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931121

Ժամկետի բացթողնման հետևանքով վարչական մարմնի կողմից միննույն փաստական հիմքերով կրկնակի վարչական վարույթի հարուցման անթույլատրելիությունը: Մասնավորապես, որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթը հարուցվել է 14.02.2018 թվականին՝ ծանուցագրով տեղեկանալով հարկային պարտավորությունները սահմանված ժամկետներում չկատարելու առթիվ վարչական վարույթի հարուցման մասին: Իսկ 14.02.2018 թվականին հարուցված վարչական վարույթի առկայության պայմաններում միննույն փաստերի (տվյալ դեպքում՝ միննույն գործարքներից ծագող, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու) վերաբերյալ նոր վարչական վարույթ 25.08.2018 թվականին չէր կարող հարուցվել, որպիսի եզրահանգման հիմքում ընկած է «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասը: Դատարանի տվյալ դատողության հիմքում ընկած է նաև իրավական որոշակիության սկզբունքի ապահովման անհրաժեշտությունը: Դատարանը 25.08.2018 թվականին ծանուցագրի կազմումը չի համարում նոր վարչական վարույթի հարուցում, իսկ դրանից հետո իրականացված գործողությունները դիտարկում է որպես 14.02.2018 թվականին հարուցված վարչական վարույթի ընթացիկ փուլի բաղկացուցիչ մասը կազմող գործողություններ: Վարչական վարույթը 14.02.2018 թվականին հարուցված լինելու պայմաններում Որոշումը 25.09.2018 թվականին ընդունելով (վարչական վարույթը չի կասեցվել, դրա ժամկետը չի երկարաձգվել՝ «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համապատասխանաբար 49-րդ և 47-րդ հոդվածների համաձայն, Պատասխանողը խախտել է նույն օրենքով սահմանված 30-օրյա ժամկետը, ինչը, 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն, վարչական ակտի անվավերության հիմք է:

Իրավախախտումը հաստատված համարելու համար ապացույցների անբավարարություն

Տարբեր հիմքերով հարուցված վարչական վարույթներով Դատարանը բավարարել է հայցը և գտել է, որ վարչական ակտը ենթակա է անվավեր ճանաչման ապացույցները բավարար չլինելու հիմքով: Դատարանը, ուսումնասիրելով վարչական գործի քննության ընթացքում ձեռք բերված վիճարկվող վարչական ակտի վարույթի նյութերը, արձանագրել է, որ վիճարկվող վարչական ակտի կայացման համար հիմք է հանդիսացել ուսումնասիրության վերաբերյալ արձանագրությունը և մեկ լուսանկար (նման ապացույցների առկայության փաստն ընդունում է նաև Պատասխանողը): Անդրադառնալով վիճարկվող վարչական ակտի հիմքում դրված արձանագրությանը՝ Դատարանն արձանագրել է, որ այն պարունակում է վարչական մարմնի կողմից պարզված հանգամանքները, այն ինքնին բավարար չէ իրավախախտման մասին համոզմունք ձևավորելու համար և ունի գնահատման կարիք, հատկապես, երբ Հայցվորը հրաժարվել է ստորագրել արձանագրությունը: Ինչ վերաբերում է վիճարկվող վարչական ակտի հիմքում դրված լուսանկարին՝ Դատարանը ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/4842/05/12 որոշմամբ արտահայտած դիրքորոշման վկայակոչմամբ, արձանագրել է, որ այն չի կարող Հայցվորի կողմից վարչական իրավախախտումը կատարելու փաստը հիմնավորող բավարար ապացույց հանդիսանալ այն պատճառաբանությամբ, որ պարզ չէ, թե այդ լուսանկարը երբ և որտեղ է կատարվել, ինչպես նաև հնարավորություն չի տալիս հաստատելու Հայցվորի կողմից նշված իրավախախտումն իրականացնելու փաստը: Վերոգրյալ հիմնավորումներով

դատարանը իրավախախտման կատարման փաստը չի հաստատել գործում առկա ապացույցներով⁴⁵:

Դատական ծախսեր

Դիտարկված գործերից 26-ով (12%-ով) Հայցվորն օրենքի ուժով ազատված է եղել պետական տուրք վճարելուց:

Ընդհանուր առմամբ, բացի պետական տուրքի, որպես դատական ծախս, վկայակոչվել է ներկայացուցչի ծախսը, փոստային ծախսերը, ինչպես նաև փորձաքննություն իրականացնելու ծախս: Այն գործերով, որտեղ ներկայացվել է ներկայացուցչի ծախսը հատուցելու պահանջ, Դատարանը փոխհատուցման չափը որոշելիս հաշվի է առել գործի սևագրությունը (մոտ 9 ամիս, 5 դատական նիստ), իրավահարաբերության բնույթը, գործի բարդությունը, դատական նիստերին փաստաբանի մասնակցությունը (մասնակցել է բոլոր դատական նիստերին, թե ոչ), փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ինչ դատավարական փաստաթղթեր են կազմվել):

Միայն վարչական տույժ նշանակելու մասին որոշումների վիճարկման գործերով ընդհանուր առմամբ ՀՀ ՊԵԿ-ից հոգուտ հայցվորների բռնագանձվել է 2,175,000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչի ծախսերի դիմաց փոխհատուցում:


3. Կարճման որոշումներ

Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրության են ենթարկվել նաև ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված 84 գործերով կայացված կարճված որոշումներ:

Հիշյալ գործերով որոշումները Դատարանի կողմից հրապարակվել են 2019 թվականի մարտ ամսից մինչև 2020 թվականի հունիս ամիսը:

Նշված գործերից 48-ով (57 %) հայցվոր է եղել առևտրային կազմակերպությունը, 19-ով (23 %)՝ ֆիզիկական անձը, 17 գործով (20 %)՝ անհատ ձեռնարկատերը:

⁴⁵ ՎԴ/0602/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930445



- Ֆիզիկական անձ է
- անհատ ձեռնարկատեր է
- ոչ առևտրային կազմակերպություն է
- առևտրային կազմակերպություն է / վերաբերելի է նաև այն դեպքերի, երբ հայցը ներկայացրել է տնօրեն՝ կազմակերպության գործունեությունից բխող հարցի շուրջ/

Նշված գործերից 6-ի դեպքում (7 %) հայցվորն ունեցել է փաստաբան ներկայացուցիչ, 18-ով ներկայացուցչի անունն առկա է եղել ՀՀ փաստաբանների պալատի կայքում, 11 գործով (13 %) հայցվորը չի ունեցել օրինական ներկայացուցիչ, 1 գործով (1 %) ունեցել է օրինական ներկայացուցիչ, 4 գործով (5 %) ունեցել է այլ տեսակի ներկայացուցիչ, իսկ 44 գործով (52 %) ներկայացված է եղել իրավաբանական անձի տնօրենի կողմից:


Դիտարկված գործերից՝

- 23-ը (27 %)՝ վերաբերել են հարկերի ուշացմանը,
- 11-ը (13 %)՝ վերաբերել են իրավախախտման համար վարչական տույժ նշանակելուն,
- 6-ը (7 %)՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման խախտումներին,
- 2-ը (2 %)՝ ստուգման ակտերին:


Մեկական գործ վերաբերել է մտավոր սեփականության օբյեկտների գրանցման, եկամտային հարկի վճարումից ազատելուն, չկատարված հարկային պարտավորությունները գանձելուն, վնասը հատուցելուն, մաքսային կանոնների խախտմանը, հաշիվների վրա անհիմն արգելանք դնելուն, ապրանքների մաքսային արժեքի որոշմանը, աշխատանքային վեճ, հարկային պարտավորությունները գանձելուն, մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարման ենթակա այլ վճարներին:

Ընդ որում, դիտարկված գործերից 33-ը (39 %)՝ հայտնի չէ, թե ինչ խնդրով են ներկայացված եղել հայցերը, քանի որ միայն հայցապահանջներից՝ այն է՝ ակտն անվավեր ճանաչելու կամ վերացնելու պահանջից, հնարավոր չէ հասկանալ, թե տվյալ ակտով ինչպիսի միջամտող դրույթներ են նախատեսված եղել հայցվորների համար, իսկ 2-ի դեպքում հստակ նշված չի եղել որոշմամբ, բայց հավանաբար վարչական տույժի հարց է եղել, քանի որ որպես կարճման հիմք դատարան է ներկայացվել «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման խախտումների վերաբերյալ մի շարք վարչական ակտեր անվավեր ճանաչելու վերաբերյալ» որոշում:

Գործերի գերակշիռ մասով (57 %) կարճման հիմք է հանդիսացել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ վեճի ըստ էության սպառված լինելը, 21-ի դեպքում (25 %) հայցվորը հրաժարվել է հայցից, 7 գործով բացահայտվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, 4 գործով վեճը ենթակա չի եղել որևէ դատարանում քննության, իսկ 4 գործով լրացած է եղել հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետը:




Գործերից 15-ով տեղի է ունեցել մեկ նիստ, 22-ով՝ երկու նիստ, 21-ով՝ երեք նիստ, 18-ով 4 նիստ, 3-ով՝ հինգ նիստ, իսկ 3 գործով կայացել է հինգից ավել նիստ:



Դիտարկված գործերից 50-ով տեղի է ունեցել նախնական նիստ:

Դիտարկված գործերի շրջանակներում 39 նիստ չի կայացել՝ ներքոնշյալ հանգամանքներով պայմանավորված:



Դիտարկված գործերից ամենաերկարը տևել 1 տարի 8 ամիս, որով նշանակված դատական նիստերից միայն մեկը չի կայացել՝ դատավորի ժամանակավոր անաշխատունակության պատճառով: Մնացած գործերի տևողության ժամանակահատվածը եղել են շատ տարբեր՝ մեկ ամսից մինչև 1 տարի:

Դիտարկված գործերից 6 գործով ներգրավված է եղել 3-րդ անձ, ընդ որում, բոլորը դատարանի նախաձեռնությամբ, որից միայն 4-ով է երրորդ անձ ներգրավվելու մասին որոշումը հասանելի եղել դատալեքսում: Երրորդ անձ ներգրավվելու համար դատարանի հիմնավորումը հիմնականում եղել է այն, որ երրորդ անձի իրավունքները անմիջականորեն կարող են շոշափվել գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով: Երրորդ անձանցից որևէ մեկը չի մասնակցել դատավարությանը և չի ներկայացրել որևէ դիրքորոշում:

Դիտարկված գործերից 7-ով Դատարանը հիմնավոր է հաստատել ներկայացուցիչի ծախսը հատուցելու պահանջը: Արդյունքում, դատարանը բավարարել է հատուցման ենթակա 414,000 ՀՀ դրամ գումար:

Վարչարարության և դատական պրակտիկայի խնդիրները կարճված գործերով հիմնականում «տեսանելի» չեն եղել, քանի որ կարճված գործերի մասով տեղեկատվությունը որոշման մեջ սահմանափակ է ներկայացված եղել: Մասնավորապես ներկայացված չեն եղել հայցի փաստական և իրավական հիմքերը, պատասխանողի դիրքորոշումները: Միայն դատավոր Արծրուն Միրզոյանի վարությամբ գտնվող գործերից մեկով է, որ նշված են եղել հայցի իրավական և փաստական հիմքերը՝ տրամադրելով ամբողջական տեղեկատվություն բոլոր գործերի առնչությամբ:

Տեղեկատվության սահմանափակ լինելու պատճառով հայտնի չէ նաև, թե արդյո՞ք միևնույն տեսակի վարչական ակտերն են միևնույն հիմքերով անվավեր ճանաչվել Կոմիտեի կողմից, թե՛ ոչ: Ուստի կարճաման որոշումներով դժվար է վերհանել վարչարարության խնդիրները, սակայն ակնհայտ է բոլոր գործերի դեպքում այն ընդհանրական խնդիրը, որ Կոմիտեն միայն գործը դատարան հասնելուց հետո է որոշում կայացնում անվավեր ճանաչել վիճարկվող վարչական ակտը և արդյունքում կրում է դատական ծախսերի ավելորդ բեռը:

Ստացվում է նաև, որ գոյություն կունենան վարչական ակտեր, որոնք ևս գործնականում անվավեր են եղել, սակայն հասցեատիրոջ կողմից չվիճարկվելու պարագայում, կատարվել են և տնտեսվարող սուբյեկտի կամ ֆիզիկական անձի կողմից վճարվել են ըստ էության ոչ իրավաչափ վարչական ակտերով նախատեսված տուգանքները:

Սույն մշտադիտարկման արդյունքում վերը թվարկված վարչարարության խնդիրները լուծելու ճանապարհ է վարչական մարմնի կողմից արագ գործելու սկզբունքը գործնականում կյանքի կոչելը և միևնույն փաստական հանգամանքներով գործերով միատեսակ մոտեցում դրսևորելը, դիցուք, եթե միևնույն տեսակի վարչական ակտերը արդեն իսկ անվավեր են ճանաչվել վարչական մարմնի նախաձեռնությամբ, ապա մյուսները ևս պետք է արագ կերպով անվավեր ճանաչվեն, որպեսզի վեճը չհասնի դատարան և վարչական մարմնի վրա չդրվի դատական ծախսերի հատուցման ավելորդ բեռը, իսկ դատարանները ավելորդ անգամ չծանրաբեռնվեն ըստ էության սպառված վեճերով:

4. Եզրակացություն և առաջարկություններ

ՀՀ ՊԵԿ-ի կողմից իրականացված վարչարարությամբ վերհանված խնդիրները, ինչպես վերը շարադրեցինք, կապված են եղել թե՛ ընթացակարգային, թե՛ նյութական իրավունքի խախտումներով վարչական վարույթ իրականացնելու հետ: Ստացվում է, որ հարկային մարմինը, հարկային ոլորտում օրինականություն ապահովելու գործընթացում թույլ տալով օրենսդրության խախտումներ, չի կարողանում պատասխանատվության ենթարկել տնտեսվարող սուբյեկտին՝ վերջինիս կողմից իրականում կատարված խախտումների մասով, ինչպես նաև անձը կարողանում է ազատվել օրենքով իրեն վերագրված հարկային պարտավորություններից՝ հենց վարչական մարմնի կողմից թույլ տրված ընթացակարգային խախտումների պատճառով: Կոմիտեի ոչ պատշաճ վարչարարության արդյունքում չեն գանձվում գործող օրենսդրությամբ սահմանված հարկերը, ինչի հետևանքով պետությանը պատճառվում է նյութական վնաս, որն արտահայտվում է նաև դատական ծախսերի տեսքով, քանի որ թե՛ պետական տուրքերը, թե՛ ներկայացուցչի վճարներն ու այլ դատական ծախսերը վճարվում են պետական բյուջեից:

Թե՛ հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը, թե՛ հարկերի գծով չվճարման համար գանձվող տուգանքներն և տույժերը պատշաճ

վարչարարությամբ առաջադրելու դեպքում տնտեսվարող սուբյեկտը զերծ կմնա հետագա խախտումների թույլ տալուց և հնարավորինս կպահպանի հարկային օրենսդրության դրույթները, ինչ չենք կարող վստահաբար նշել այն դեպքերի մասով, երբ ոչ պատշաճ վարչարարության հետևանքով խախտում կատարած տնտեսվարող սուբյեկտը ազատվում է վարչական պատասխանատվությունից:

Վարչարարության միևնույն խախտումները վարչական մարմնի կողմից պարբերաբար թույլ տալը կարող է վկայել այն մասին, որ պարզապես տվյալ մարմինը չի ընդունում իր կողմից թույլ տրված խախտումները և դրա հետ կապված դատարանի օբյեկտիվ հիմնավորումները: Տվյալ մոտեցումը վարչական մարմնի կողմից արդարացված կլինեք այն դեպքում, երբ վեճն առաջացած լինեք օրենքի որևէ դրույթի տարրընկալման արդյունքում, սակայն այն դեպքերում, երբ դատարանը միատեսակ կերպով մի քանի գործերով արձանագրում է, որ հարկային մարմինը հղում է տվել ուժը կորցրած օրենքի դրույթին, վարչական մարմնի կողմից անարդյունավետ է կրկին թույլ տալ նմանատիպ խախտում՝ ապավինելով վերաքննության կարգով դատական ակտի բողոքարկման արդյունքներին, ինչի դրական լուծման հավանականությունը ևս պետք է վարչական մարմնի կողմից բազմակողմանիորեն վերլուծության ենթարկվի:

Վերհանված վարչարարության խնդիրները լուծելու գլխավոր ճանապարհը դատարանի կողմից արձանագրված խախտումներն ընդունելը և դրանք այլևս թույլ չտալը կլինի, որի պարագայում միևնույն խնդրով բազմաթիվ վեճեր չեն առաջանա և արդյունքում չեն վատնվի թե՛ վարչական մարմնի, թե՛ դատարանի մարկային և ֆինանսական ռեսուրսները:

Վերը նշված խնդիրներից խուսափելու և պատշաճ և նպատակային վարչարարություն իրականացնելու նպատակով առաջարկում ենք.

Պետական եկամուտների կոմիտեին.

- Միջոցներ ձեռնարկել ապահովելու Կոմիտեի տեսուչների կողմից վարչական վարույթի մասնակիցների՝ լսված լինելու իրավունքի պատշաճ իրացումը, այդ թվում՝ տնտեսվարող սուբյեկտների՝ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտի ներկայությամբ կազմված և ընթերցված լինելը, արձանագրության հասցեատիրոջ ներկա գտնվելը դրա կազմմանը:
- Ապահովել տեսուչների կողմից ընթացակարգային այլ կանոնների, օրինակ՝ հսկիչ գնում իրականացնելիս հանձնարարագրի օրինակի՝ անձին տրամադրելը, պատշաճ լիազորագրի հիման վրա հսկիչ գնում իրականացնելը և այլն, պահպանումը: Այս նպատակով իրականացնել պարբերական իրազեկման միջոցառումներ տեսուչների և վարույթ իրականացնողների համար:
- Ապահովել վարչական վարույթի և լսումների մասնակիցների պատշաճ ծանուցում՝ վերջիններիս լսված լինելու իրավունքը գործնականում երաշխավորելու նպատակով:
- Ապահովել ծանուցման բովանդակության որոշակիությունը:

- Ապահովել ՊԵԿ տեսուչների՝ վարչարարության մասնակիցների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ գիտելիքների թարմացումը:
- Այն գործերով, որոնցով բացակայում է հրատապ վարչական ակտ կայացնելու անհրաժեշտությունը, ապահովել վարույթի ամբողջական՝ հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերը՝ վարույթի մասնակիցների իրավունքների պատշաճ իրացման նպատակով: Հակառակ դեպքում ապահովել վարույթ իրականացնողների կողմից վարչական ակտ կայացնելու հրատապության պատշաճ հիմնավորումը:
- Ապահովել Կոմիտեի ներկայացուցիչների կողմից վարույթ հարուցելիս գործի լրիվ, բազմակողմանի քննության իրականացումը (տեսուչների և լսումներ իրականացնող պաշտոնատար անձանց կողմից անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրում, ուսումնասիրություն, հարցումների իրականացում՝ փոխօգնության սկզբունքի պահպանմամբ, և այլն), վարչական ակտերին ներկայացվող պահանջների բավարարումը, ակտի փաստական և իրավական հիմքերի հանգամանակից ներկայացումը: Միջամտող վարչական ակտ ընդունելու պայմաններում ապահովել անձի համար ոչ բարենպաստ և պատասխանատվության հանգեցնող հանգամանքների ապացուցման պարտականության պատշաճ կատարումը՝ փոխարենը հակառակն ապացուցելու բեռը անձի վրա դնելու:
- Ապահովել ՊԵԿ աշխատակիցների համար օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը: Բացառել դատական կարգով անվավեր ճանաչված ակտի հիմքով գանձումներ կատարելը:
- Կատարել դատական պրակտիկայի պարբերական վերլուծություններ, դատարանի մատնանշած խնդիրների վերհանում և դրա շրջանակներում ապահովել վարչարարություն իրականացնող պաշտոնատար անձանց վերապատրաստումներ, իրազեկվածության բարձրացում դատական պրակտիկայի: Ապահովել վարչարարություն իրականացնող պաշտոնատար անձանց իրազեկվածությունը նաև իրավական կարգավորումների, դրանց փոփոխությունների վերաբերյալ:
- Հաշվի առնելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի նախադատելիության սկզբունքը և դատական համակարգը չճանրաբեռնելու նպատակով՝ հորդորել խուսափել միատեսակ վեճերի շուրջ կայացված վճիռներով Դատարանի կողմից հաստատված վարչարարության նույնանման խնդիրներով կրկին վարույթներ հարուցելուց, իսկ հարուցված դատական գործերով ապահովել արտադատական կարգով վեճերի լուծումը՝ ապահովելով իրավունքի գերակայության հիմնական հայեցակետերից մեկի՝ իրավական որոշակիության սկզբունքի (inter alia) պահպանումը:
- Բարձրացնել ՊԵԿ-ի ակտերի վերադատության կարգով բողոքարկման մեխանիզմի արդյունավետությունը, որը թույլ կտա նաև խուսափել դատական համարկարգի ծանրաբեռնվածությունից և պետական միջոցների անհարկի ծախսից:

- Բացառել վարչական ակտը հարկադիր կատարման ուղարկելը օրենքով սահմանված՝ եռամսյա ժամկետի ավարտից հետո: Թեև հիմնական վարչարարության խախտումը այս գործերով թույլ է տալիս Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, որը վարույթ հարուցելիս պատշաճ չի ստուգում վերը նշված վավերապայմանները, այնուամենայնիվ խնդրի մյուս կողմում ՊԵԿ-ն է, որը չի իրականացնում պատշաճ վարչարարություն՝ բաց թողնելով կատարման ներկայացնելու ժամկետները:
- ՊԵԿ ղեկավար աշխատակազմին՝ ապահովել աշխատակիցների աշխատանքային և հանրային ծառայողի իրավունքներն ու երաշխիքները՝ բացառել անձանց արհեստական հիմքերով աշխատանքից ազատելը:

Դատարաններին՝

- Առաջարկել վարչական վարույթի լուումների անցկացման մասին վարչական ակտի հասցեատիրոջը պատշաճ կերպով ծանուցելու վերաբերյալ պատճառաբանություններն ու հիմնավորումները բխեցնել թիվ ՄԴՈ-1529 որոշմամբ արձանագրած դիրքորոշումից՝ ապահովելով նաև միատեսակ դատական պրակտիկան: